

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թ.
մարտի 19-ի նիստի N 11
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ
ՏԵՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ**

1. Ներածություն

Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանի Հանրապետությունում, կազմավորվելով 1996 թվականին, դեռևս կայացման և ամրապնդման ժամանակաշրջան է ապրում: Փնտրվում են մեխանիզմներ և ուղիներ՝ ՏԻՄ-երի հաշվետվողականությունը բարելավելու, նրանց կողմից կատարվող աշխատանքներն առավել արդյունավետ, որակյալ և թափանցիկ դարձնելու, ինչպես նաև համայնքային կառավարմանը բնակչության ակտիվ մասնակցությունը խրախուսելու նպատակով:

Այդ առումով, առավել արդիական և արդյունավետ ուղիներից են ՏԻՄ-երի տեղեկատվայնացումը, տեղական տեղեկատվական հասարակության ձևավորումը և զարգացումը:

Այսօր տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ) և կառավարման տեղեկատվական համակարգերը ծառայում են ոչ միայն որպես տեղեկատվության մշակման միջոց, այլ նաև որպես չափազանց կարևոր ներուժ, որով որոշվում է կառավարման մարմինների մրցակցային դիրքը և նրանց առաքելության կատարման հնարավորությունը:

Տեղեկատվայնացումը հասարակության զարգացման բնականոն օրինաչափություն է, նրա առաջընթացի անհրաժեշտ պայման: Դա ոչ միայն նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մշակում և ներդրում է, այլև տեղեկատվական միջոցների և տեխնոլոգիաների ստեղծման, զարգացման և զանգվածային կիրառման գործընթաց, որով ապահովվում է յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի և կյանքի պայմանների բարելավման համար անհրաժեշտ և բավարար տեղեկացվածության պատշաճ մակարդակ: Այլ կերպ ասած, տեղեկատվայնացումը տեղեկատվական ռեսուրսների կազմավորման և օգտագործման հիման վրա քաղաքացիների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և հասարակական միավորումների տեղեկատվական պահանջների բավարարման և իրավունքների իրացման համար օպտիմալ պայմանների ստեղծման սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական կազմակերպչական գործընթաց է:

Տեղեկատվական հասարակությունը ենթադրում է հասարակության լայն խավերի ներգրավում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեջ: Տեղեկատվական հասարակություն գաղափարը բնութագրում է հասարակության տեսակ, որտեղ տեղեկատվության և գիտելիքի ստեղծումը, օգտագործումը ու մշակումը հանդիսանում են կարևոր տնտեսական, քաղաքական և մշակութային գործոններ¹: Տեղեկատվական հասարակության ձևավորումը համայնքներում (տեղական տեղեկատվական հասարակություն) բարդ գործընթաց է, որը պետք է ընթանա տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների հասանելիության ապահովման, հասարակության համար համապատասխան տեղեկատվական ռեսուրսների և առցանց ծառայությունների ստեղծման, ՏԻՄ-քաղաքացի էլեկտրոնային եղանակով փոխգործակցության ապահովման, քաղաքացիների կրթական մակարդակի բարձրացման և տարբեր այլ համալիր ծրագրերի իրականացման շնորհիվ:

Տեղեկատվայնացում կազմակերպելու և իրականացնելու գործում մեծ պատասխանատվություն են կրում երկրի իշխանությունները: Հենց տեղական և պետական իշխանություններն են, որ, իրենց իրավասությունների շրջանակներում, կազմակերպում և կարգավորում են համայնքի, մարզի, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացները: Հենց իշխանություններից է այսօր հիմնականում կախված, թե մեր հասարակությունը արդյո՞ք դեպի նոր քաղաքակրթություն կգնա, թե՞ կմնա անցյալում:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի անցած ուղին ու միջազգային փորձն ապացուցել են, որ քաղաքացիների հետ առավել սերտորեն համագործակցող ու թափանցիկ գործող ՏԻՄ-երի գործունե համակարգն է ի վիճակի հասնել համայնքներում տեղական ինքնակառավարման արդյունավետ կազմակերպման գերնպատակին: Այս տեսանկյունից կարևորագույն նշանակություն են ձեռք բերում, նախ, տեղեկատվական համակարգերի մշակումը և արդյունավետ ներդրումը համայնքներում, և ապա, միջհամայնքային և համապետական տեղեկատվական ցանցերի ստեղծումը և օգտագործումը:

Ժամանակի ընթացքում աշխարհի առաջավոր երկրները մեծամասամբ ձևավորել են իրենց քաղաքակրթությունը և ռազմավարությունը մարդու կենսագործունեության տարբեր ոլորտների տեղեկատվայնացման և տեղեկատվական հասարակության ձևավորման նկատմամբ:

Առանց լուրջ պետական քաղաքականության, ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման ոլորտում նշանակալի արդյունքների հասնելն անհնարին է: Ընդ որում, ՏԻՄ-երի գործունեության

տեղեկատվայնացման քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի բոլոր շահագրգիռ կողմերի (հասարակություն, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, միջազգային կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատված, զանգվածային լրատվամիջոցներ և այլն) համախմբմանն ընդհանուր նպատակի շուրջ:

Կարևորելով և գնահատելով հարցի նշանակությունը, ՀՀ կառավարությունը ևս որդեգրել են երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և տեղեկատվական /էլեկտրոնային/ հասարակության ձևավորման քաղաքականություն. *տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) արդյունաբերությունը հռչակված է որպես Հայաստանի տնտեսության գերակա ճյուղ:*

Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավումը միտված է զարգացնել պետության բոլոր մակարդակներում արդյունավետ կառավարման ներուժը: Ըստ այդմ՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկությունը, ավելացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների տեսականին՝ միաժամանակ բարձրացնելով դրանց որակը բոլոր համայնքներում²:

2. Հայեցակարգի նպատակը

Սույն հայեցակարգի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել Հայաստանում ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման և համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացում առկա հիմնական խնդիրները, ներկայացնել հիմնավորված առաջարկություններ, որոնք կօգնեն ուսումնասիրվող ոլորտում որոշումներ կայացնելու գործում, ինչպես նաև կարող են դրվել ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման բնագավառներում իրականացվող քաղաքականության հիմքում՝ պետական և համայնքային մակարդակներում:

3. Իրավիճակի նկարագրություն

1995թ. համաժողովրդական հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ ամրագրվեց տեղական ինքնակառավարումը՝ որպես իշխանության առանձին օղակի: Նույն տարում ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով Հայաստանում կազմավորվեցին 10 մարզեր (տարածքային կառավարմամբ՝ որպես պետական կառավարման բաղկացուցիչ մասի) և 926 համայնքներ (տեղական ինքնակառավարումով), որոնցից 48-ը քաղաքային էին, 12-ը՝ Երևանի թաղային, իսկ 866-ը՝ գյուղական: Մայրաքաղաք Երևանը ստացավ մարզի կարգավիճակ:

1996թ. ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ առաջին օրենքը, իսկ 2002թ.՝ ՀՀ երկրորդ օրենքը: 1996թ. կայացած ՀՀ տեղական ընտրությունների արդյունքում, 926 համայնքներում ձևավորվեցին ՏԻՄ-եր՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար:

2005թ. ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների շնորհիվ մայրաքաղաք Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ: 2008թ. ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա և 2009թ. կայացած Երևանի ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում, Երևանում ձևավորվեցին ՏԻՄ-եր՝ ավագանի և քաղաքապետ:

Այժմ Հայաստանում կան 915 համայնքներ, այդ թվում՝ 49 քաղաքային և 866 գյուղական: Ընդ որում, ՀՀ բնակչության մոտ 64%-ը բնակվում է քաղաքային համայնքներում³: Մոտ 470 գյուղական համայնքների բնակչության թիվը պակաս է 1000 մարդու, իսկ դրանցից 23-ինը՝ չի գերազանցում 100 մարդը:

Երկրում իրականացվող տնտեսական և քաղաքական բարեփոխումները հրատապ դարձրեցին ՏԻՄ-երի կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետության և որակի բարձրացումը: Պետության ժողովրդավարացման պայմաններում, այդ գործընթացները պետք է ուղեկցվեին ՏԻՄ-երի հաշվետվողականության ապահովման և որոշումների կայացման գործում բնակչության ներգրավման համար համապատասխան պայմանների ու մեխանիզմների ստեղծմամբ: Այդ նպատակներին հասնելու արդիական և ար-

դյունավետ ճանապարհներից է ՏԻՄ-երի տեղեկատվայնացումը, որն ուղեկցվում է նաև տեղական տեղեկատվական հասարակության ձևավորմամբ և զարգացմամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը նպաստավոր պայմաններ է ստեղծում տեղական ինքնակառավարման ոլորտի կատարելագործման, ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման, թափանցիկության և հրապարակայնության ապահովման, նրանց կողմից քաղաքացիներին և կազմակերպություններին մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, դրանք առավել մատչելի դարձնելու, համայնքային բյուջեները և սեփականությունն առավել արդյունավետ կառավարելու, քաղաքացիների կողմից ՏԻՄ-երի գործունեությունը վերահսկելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար:

4.1. ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման և տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացը (1996–2013 թթ.)

Հայաստանի Հանրապետությունում ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման գործընթացը սկսվել է անմիջապես տեղական ինքնակառավարման համակարգի գործարկումից հետո⁴: Տարիների ընթացքում ստեղծվել և տարբեր համայնքներում ներդրվել են տեղեկատվական տարբեր համակարգեր, աստիճանաբար ավելացել է համակարգչային տեխնիկայի քանակը: Իրրև այս ամենի արդյունք՝ որոշակիորեն բարելավվել է ՀՀ շատ ՏԻՄ-երի աշխատանքի որակը, արագացել է տվյալների մշակման, փաստաթղթերի պատրաստման և որոշումների ընդունման գործընթացը:

ՀՀ կառավարության, ՏԻՄ-երի և հասարակական կազմակերպությունների ուժերով և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կատարվել են բազմաթիվ աշխատանքներ՝ նպատակաուղղված ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացմանը:

Հայաստանում 1996–2013 թթ. ընթացքում ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման գործընթացը կարելի է բաժանել չորս հիմնական փուլերի՝

Փուլ	Տարիներ	Հիմնական արդյունքները	ՏԻՄ-երում առկա համակարգիչների մոտավոր քանակը
I	1996–1999	- ՏԻՄ-երի համար առաջին կիրառական ծրագրային միջոցների ստեղծում: 10 քաղաքապետարաններում առաջին տեղեկատվական-վերլուծական կենտրոնների հիմնադրում:	105
II	2000–2002	- Առաջին տեղային համակարգչային ցանցերի ստեղծում 45 քաղաքապետարաններում և գյուղապետարաններում: «Բնակչության ռեգիստր», «Գործավարություն», «Բյուջետավարում» ծրագրային փաթեթների ներդրում մոտ 50 քաղաքապետարաններում և գյուղապետարաններում:	310
III	2003–2006	- Համացանցային տեխնոլոգիաների հիման վրա գործող միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում և փորձնական ներդնում ՀՀ 12 քաղաքապետարաններում (Intranet): - ՏԻՄ-երի կողմից գույքահարկի տվյալների շտեմարանների վարման և գույքահարկի գանձման աշխատանքների մեկնարկում:	870


IV	2007–2013	• Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ստեղծում և գործարկում ՀՀ 490 համայնքներում: • ՔԿԱԳ տարածքային բաժինների էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծում և գործարկում ՀՀ ՔԿԱԳ բոլոր 54 տարածքային բաժիններում: • Համայնքներում հողի հարկի տվյալների շտեմարանների վարման և հողի հարկի գանձման աշխատանքների մեկնարկում: Գույքային հարկերի հաշվառման համակարգի կիրառում բոլոր համայնքների կողմից: • 11 քաղաքապետարաններում քաղաքացիների սպասարկման գրասենյակների ստեղծում: • Համայնքային պաշտոնական կայքերի թողարկում (60 համայնքներում): • ՏԻՄ-երի կողմից էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և էլեկտրոնային ստորագրության կիրառման հիմքերի ստեղծում:	2560
----	-----------	---	------

Կատարված աշխատանքների և իրականացված ծրագրերի հիմնական արդյունքները 2013 թ. հունիսի 1-ի դրությամբ ներկայացված են ստորև:

N	Ծրագրային ուղղությունները	Արդյունքները
1	Համակարգչային տեխնիկա և գրասենյակային սարքավորումներ	Բոլոր 48 քաղաքապետարանները և բազմաթիվ գյուղապետարաններ ապահովված են ժամանակակից համակարգիչներով (մոտ 2500 միավոր) և հարակից գրասենյակային սարքերով (տպող և պատճենահանող սարքեր, պատկերամուտներ, ցանցային սարքավորումներ և այլն) ⁵ :
2	Համակարգչային ցանցեր	Մոտ 200 քաղաքապետարաններում և գյուղապետարաններում ստեղծվել են տեղային համակարգչային ցանցեր:
3	Հատուկ ծրագրային միջոցներ և կառավարման տեղեկատվական համակարգեր	ՏԻՄ-երի համար ստեղծվել են տարբեր ծրագրային միջոցներ և կառավարման տեղեկատվական համակարգեր. ▪ «Բնակչության ռեգիստր» (1999–2003 թթ)⁶, ▪ «Գործավարություն» (2000–2003 թթ)⁷, ▪ «Բյուջետավարում» (1999–2003 թթ)⁸, ▪ «Համայնքային գույքի կառավարում» (2004–2005 թթ)⁹, ▪ «Գույքային հարկերի հաշվառման ավտոմատացված տեղեկատվական համակարգ» (1998–2003 թթ)¹⁰, ▪ «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» (ՀԿՏՀ) (2007–2011 թթ)¹¹, ▪ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինների էլեկտրոնային կառավարման համակարգ (ՔԿԱԳ ՏԲ ԷԿՀ) (2007–2009 թթ)¹²:

4	Տեղեկատվական համակարգեր սպասարկող անձնակազմ	Համայնքներում ներդրված տեղեկատվական համակարգերը սպասարկելու համար ուսուցանվել են ավելի քան 4700 մասնագետներ ¹³ :
5	Համայնքային պաշտոնական համացանցային կայքեր	Թվով 60 համայնքներ (41 քաղաքային և 19 գյուղական) ունեն պաշտոնական համացանցային կայքեր՝ ստեղծված տարբեր կազմակերպությունների կողմից:
6	Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն և էլեկտրոնային ստորագրություն	ՏԻՄ-երը սկսել են կիրառել էլեկտրոնային ստորագրություն՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն իրականացնելու և հարկային մարմիններ էլեկտրոնային տեսքով հաշվետվություններ ներկայացնելու նպատակով:
7	Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ)	ՀՀ 11 քաղաքային համայնքներում ստեղծվել են ՔՍԳ-ներ: Այդ գրասենյակները գործում են կառավարման միասնական տեղեկատվական համակարգի հիման վրա՝ տրամադրելով քաղաքացիներին /բնակչությանը/ 12–20 տարբեր տիպի ծառայություններ ¹⁴ :

2013 թ. հունիսի 1-ի դրությամբ քաղաքապետարաններում և գյուղապետարաններում առկա համակարգիչների քանակը ըստ մարզերի ներկայացված է ստորև՝ նկար 1-ում:



Նկար 1. ՀՀ քաղաքապետարաններում և գյուղապետարաններում առկա համակարգիչների թիվը՝ ըստ մարզերի

4.2. Հեռահաղորդակցության միջոցների հասանելիությունը

Դեռևս 2009 թվականին համացանցի հասանելիությունը Հայաստանի ամբողջ տարածքում գնահատվում էր 15 տոկոսից էլ ցածր, սակայն այսօր, ըստ տարբեր տվյալների, այդ ցուցանիշը մոտենում է 95 տոկոսի:

Համաձայն www.internetworldstats.com-ի 2011թ. դեկտեմբերի 31-ի տվյալների, Հայաստանի 2 մլն 970 հազ. բնակչության մոտ 60 տոկոսը կամ 1 մլն 800 հազ. մարդ օգտվել է համացանցից¹⁵: Համաձայն ՀՀ

կապի և տրանսպորտի նախարարության կողմից հրապարակված «Կապի և տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների (ըստ Կապի Տարածաշրջանային Համագործակցության)» համացանցից օգտվող բնակչության մասնաբաժինը 2012 թ. կազմել է 40.49%¹⁶:

Ակնհայտ է, որ այս ցուցանիշները բջջային հեռախոսներից համացանց մուտք գործելու հնարավորություն ունեցող օգտվողների թվի ավելացման արդյունք է: Լայնաշերտ, այսինքն՝ գերարագ համացանցից Հայաստանում օգտվում են անհամեմատ ավելի քիչ թվով մարդիկ:

Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ «2011 թվականին համացանցի հասանելիության ծառայություններ ստացող բաժանորդների թիվը՝ ներառյալ GPRS տեխնոլոգիայով օգտվողների, արդեն իսկ հասել է շուրջ 1,7 միլիոնի, իսկ լայնաշերտ համացանցի ծառայություններ ստացողների թիվն աճել է շուրջ 30%-ով»¹⁷:

Հայաստանում գործում են մեծածախ համացանցի երեք մատակարարներ՝ «Արմենթել», «GNC-Alfa» և «FiberNet» ընկերությունները, որոնք ունեն կապի օպտիկամանրաթելային ալիքներ, որ գալիս են Իրանից և Վրաստանից: Կան մանրածախ համացանցի մոտ 50 մատակարարներ, որոնց մեծ մասը գործունեություն է ծավալում հիմնականում Երևանում և ՀՀ խոշոր քաղաքային համայնքներում:


Հայաստանի բջջային կապի երեք օպերատորների կողմից երկրի գրեթե 100 տոկոսը ծածկված է շարժական համացանցային կապով (2G, 3G GSM, 4G/LTE և այլ տեխնոլոգիաներով): Այսպես, «Օրանժ-Արմենիա» և «ՎիվաՍել-ՄՏՍ» օպերատորների կողմից ապահովվող 3G ծածկույթը կազմում է 95 տոկոս, «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի GPRS ծածկույթը՝ 99,8 տոկոս¹⁸:

Համաձայն ՀՀ կապի և տրանսպորտի նախարարության կողմից հրապարակված «Կապի և տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների (ըստ Հեռահաղորդակցության Միջազգային Միության)» ընդհանուր բնակչության տոկոսը, որտեղ գործում է առնվազն 3-րդ սերնդի (3G) շարժական հաղորդակցության ցանցի ծածկույթ 2011 թ. կազմել է 97.4%, իսկ **2012 թ-ին՝ 97.5%**: Այս ցուցանիշը չափում է բնակիչների տոկոսը, ովքեր գտնվում են առնվազն 3-րդ սերունդ (3G) շարժական հաղորդակցության ազդանշանի տիրույթում՝ անկախ նրանից՝ արդյոք նրանք բաժանորդ են, թե ոչ¹⁹:

Հեռահաղորդակցության միջոցների հասանելիությունը և քաղաքացիների կողմից համացանցի օգտագործման ծավալների մեծացումը բերում է նրանց կողմից համացանցով մատուցվող ծառայությունների պահանջարկի մեծացմանը, և հետևաբար, ՏԻՄ-երին «պարտավորեցնում» է ակտիվորեն կիրառել համացանցը, քաղաքացիներին տրամադրել արդիական տեղեկատվություն և մատուցել առցանց ծառայություններ:

Համացանցի հասանելիության աստիճանի բարձրացմանը զուգահեռ ավելանում են այն քաղաքապետարանների և գյուղապետարանների քանակը, որոնք ակտիվորեն կիրառում են որակյալ և մշտական համացանց: 2012թ. հունիսի 1-ի դրությամբ շուրջ 650 քաղաքապետարաններ և գյուղապետարաններ արդեն կիրառում էին համացանց: Համացանցի կիրառման հարցում առավել ակտիվ են (տես՝ նկար 2) ՀՀ Կոտայքի, Արարատի և Տավուշի մարզերի ՏԻՄ-երը (100%, 95,9% և 96.8% համապատասխանաբար): Համացանցի կիրառման վիճակն առավել վատթար է ՀՀ Արագածոտնի և Շիրակի մարզերի ՏԻՄ-երի կողմից (46.5% և 47.9% համապատասխանաբար):

Այդուհանդերձ, համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի և, մասնավորապես, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կիրառման պահանջներն աստիճանաբար ստիպում են ՏԻՄ-երին առավել ակտիվորեն կիրառել համացանցի հնարավորությունները: 2013թ. վերջին ևս 180 գյուղապետարաններ իրենց առօրյա աշխատանքներում սկսել են կիրառել համացանցի հնարավորությունները:



Նկար 2. Համացանցից օգտվող քաղաքապետարանների և գյուղապետարանների տեսակարար կշիռներն ընդհանուրի մեջ՝ ըստ մարզերի (2012 թ. հունիսի 1-ի դրությամբ)

4. Տեղեկատվական հասարակությունը համայնքներում

ՀՀ համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը նոր գործընթաց է։ Ներկա իրավիճակի նկարագրության համար անհրաժեշտ է անդրադառնալ համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորմանն ուղղված պետության կողմից ընդունված ռազմավարական մոտեցումներին, օրենսդրական դաշտի վերլուծությանը, իրականացված ծրագրերին։

2010 թվականի փետրվարի 25-ին ՀՀ կառավարության N 7 արձանագրային որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010–2012թթ)» (այսուհետ՝ հայեցակարգ)։ Քանի որ էլեկտրոնային հասարակությունը ենթադրում է հասարակության լայն խավերի ներգրավում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեջ, ապա հայեցակարգով նախատեսվել է «Համակարգչային գրագիտություն դպրոցում» նախագիծը, որը պետք է ապահովի հանրակրթական դպրոցների շրջանավարտների կողմից պարտադիր համակարգչային հմտությունների տիրապետումը և նրանց բնականոն ընդգրկումը էլեկտրոնային հասարակության մեջ։ Նմանատիպ նախագիծ է նաև «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը²⁰, որը հնարավորություն կտա ավելի մատչելի դարձնել համակարգիչները և դրանց հետ առնչվող էլեկտրոնային կառավարման գործառնությունները բնակչության ամենալայն խավերի համար։

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցման արդյունքում ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության կայացմանն ուղղված 2013-2015թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որն ուղղված է ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության շարունակական զարգացման ապահովմանը, ինչպես նաև վերջին զարգացումներից ելնելով՝ ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության կայացմանն ուղղված նոր միջոցառումների սահմանմանը²¹։

Այդուհանդերձ, տեղեկատվական հասարակության ձևավորումը համայնքներում բարդ և ծախսատար գործընթաց է, որը պետք է ընթանա տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների հասանելիության ապահովման, հասարակության համար համապատասխան տեղեկատվական ռեսուրսների և առցանց ծառայությունների ստեղծման, քաղաքացիների կրթական մակարդակի բարձրացման և տարբեր այլ համալիր ծրագրերի ու միջոցառումների համակարգված և հետևողական իրականացման շնորհիվ։

5. ՏԻՄ–երի գործունեության տեղեկատվայնացման և տեղեկատվական հասարակության զարգացման խնդիրները

5.1. Օրենսդրական դաշտը

ՏԻՄ–երի գործունեության տեղեկատվայնացման և տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացի հաջողության կարևոր նախապայման է անհրաժեշտ օրենսդրության և իրավական դաշտի ձևավորումը: Այն պետք է մի կողմից նպաստի ՏԻՄ–երի գործունեության արդյունավետ տեղեկատվայնացման գործընթացին, ապահովի նրանց գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը, իսկ մյուս կողմից՝ նպաստի հասարակական կյանքում տեղեկատվության, գիտելիքի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերի մեծացումը:

Օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՏԻՄ–երը հիմնականում ազատ են իրենց գործունեությունը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կամ առանց դրանց կազմակերպելու հարցում և, ընդհանրապես, չկան օրենսդրական պարտավորություններ էլեկտրոնային եղանակով քաղաքացիներին ծառայություններ մատուցելու, տեղեկատվություն տրամադրելու և մասնակցային գործընթաց ապահովելու առումով:

Կան որոշ բացառություններ, որոնք կարող են պարտադրել ՏԻՄ–երին, որոշ գործառույթներ իրականացնելիս, օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաներ: Այսպես՝ օրինակ, համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, քաղաքապետարանները կամ գյուղապետարանները, որպես հարկ վճարող սուբյեկտներ, կարող են ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմին ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ²²: Համաձայն «Եկամտային հարկերի մասին» ՀՀ օրենքի, հարկային գործակալները պարտավոր են **բացառապես էլեկտրոնային եղանակով** հարկային մարմին ներկայացնել նոր աշխատողի համար գրանցման հայտը, ինչպես նաև եկամտային հարկի ամենամյա ամփոփ հաշվարկը²³:

Մեկ այլ ՀՀ օրենք նախատեսում է՝ «Օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մատուցում հրապարակելու միջոցով, տեղեկատվությունը պարունակող հայտարարությունը պետք է տեղադրվի նաև <http://www.azdarar.am> հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում: Հայտարարություն տվող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, պետական կամ **տեղական ինքնակառավարման մարմինը** հայտարարության տեքստը էլեկտրոնային կրիչով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված էլեկտրոնային ֆորմատով, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն»²⁴: Բացի այդ, էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում հրապարակային ծանուցում հրապարակող անձը **կարող է** լրացնել պահանջվող տվյալները կայքի էլեկտրոնային դիմում բաժնում:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը ամրագրում է, որ ՏԻՄ–երը **պարտավոր չեն ընդունել** էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, **եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ**:

ՀՀ կառավարությունը վարում է էլեկտրոնային ստորագրության համատարած կիրառման քաղաքականություն: Այսպես, հարկային մարմիններն անցնում են հարկատուներից հաշվարկները (հաշվետվությունները, հայտարարությունները) և գրությունները բացառապես էլեկտրոնային եղանակով ընդունելու եղանակին: «Հարկերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է՝ «ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը»²⁵: Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ «Հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ **բացառապես** էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել սահմանված ձևի եկամտային հարկի ամփոփ հաշվարկ...»²⁶: ՀՀ կառավարությունը նույնիսկ սուբսիդավորում է փոքր և միջին ձեռնարկատերերին՝ խրախուսելով նրանց կողմից էլեկտրոնային ստորագրություն ձեռք բերելը և կի-

րառելը²⁷:

Չնայած «Էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքը գործում է 2004 թվականից, էլեկտրոնային ստորագրությունը մինչև 2008թ.-ը կիրառություն չէր ստացել համապատասխան ենթակառուցվածքների բացակայության պատճառով: 2008 թվականին ՀՀ կառավարության կողմից հիմնադրվեց էլեկտրոնային ստորագրություն տրամադրող կենտրոնը: Համայնքների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք սկսել են ակտիվորեն կիրառել էլեկտրոնային ստորագրություն: Էլեկտրոնային ստորագրության կիրառումը լայն հնարավորություններ է ընձեռում էլեկտրոնային կառավարման գաղափարի կյանքի կոչման և, ընդհանուր առմամբ երկրի մակարդակով միասնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ստեղծման ու գործարկման համար:

ՏԻՄ-երը, մի կողմից, հավաքագրում են տեղական հարկեր և, հետևաբար, հարկատու կազմակերպություններից ընդունում են ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված տեղական հարկերի (գույքահարկ, հողի հարկ) վերաբերյալ հաշվետվություններ, հաշվարկներ և այլ փաստաթղթեր, մյուս կողմից, նրանք, որպես հարկային գործակալներ, հաշվարկում ու վճարում են եկամտահարկ և սոցիալական հատկացումներ համայնքների աշխատակազմերի աշխատողների համար, վերջիններիս աշխատավարձերից և դրանց հավասարեցված վճարումներից: Հետևաբար, օրենքով սահմանված կարգով, ՏԻՄ-երը հարկային մարմիններին են ներկայացնում համապատասխան հաշվարկներ (հաշվետվություններ): Այս առումով ակնհայտ է, որ ՏԻՄ-երը պետք է առավել շահագրգռված լինեն էլեկտրոնային ստորագրություն և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն կիրառելու հարցում: Բացի այդ, միևնույն հարկատուները կարողանում են հարկային մարմիններ օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները և հաշվարկները ներկայացնել էլեկտրոնային եղանակով, իսկ ՏԻՄ-երին՝ ոչ, ինչը հակասում է ՀՀ հարկային օրենսդրության պահանջներին (տես «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի և 15.1-ի դրույթները): Սակայն մյուս կողմից, պետք է փաստել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքում ներառված «ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը» վերաբերում է միայն պետական հարկերի գծով եկամուտների հավաքագրում և հաշվառում իրականացնող հարկային մարմիններին, իսկ ՏԻՄ-երին՝ ոչ: Նմանատիպ հակասությունները վերացնելու համար անհրաժեշտ է վերամշակել նշված կարգը կամ ընդունել նոր կարգ՝ «ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները տեղական ինքնակառավարման մարմիններ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգ»:

Այսպիսով, գործող օրենսդրությունը չի նպաստում ՏԻՄ-երի կողմից էլեկտրոնային ստորագրության և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կիրառման ակտիվացմանը: Օրենսդրությունը պետք է հիմնարար պատկերացումներ տա տեղեկատվության, էլեկտրոնային փաստաթղթի, թվային ստորագրության, գաղտնիքի, հաշվառման ընթացակարգերի վերաբերյալ: Պետք է օրենսդրորեն սահմանվեն ՏԻՄ-երի կողմից տեղեկատվության հաշվառման, մշակման, թարմացման, կիրառման, տրամադրման, ինչպես նաև էլեկտրոնային փոխհարաբերությունների կանոնները: Էլեկտրոնային փաստաթղթի և տեղեկատվության իրավական կարգավիճակը ոչ մի կերպ չպետք է զիջի թղթայինին:

ՀՀ գործող օրենսդրությունը չի պարտադրում ՏԻՄ-երին նաև ունենալ և վարել համացանցային պաշտոնական կայքեր: Այս առումով, բացառություն է կազմում միայն Երևան քաղաքային համայնքը, որի համացանցային պաշտոնական կայքը՝ www.yerevan.am, ամրագրված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով²⁸: Նույն օրենքով նախատեսված են նաև համացանցային կայքում պարտադիր հրապարակման ենթակա իրավական ակտերն ու տեղեկությունները՝

- ավագանու իրավական ակտերը (*որոշումները, հայտարարությունները և ուղերձները*) և նիստերի արձանագրությունները,
- տեղեկություն ավագանու նիստի ժամանակի վերաբերյալ, ավագանու նիստի օրակարգի նախագիծը, ավագանու որոշման նախագծերը և դրանց կցված փաստաթղթերը ,
- քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների և քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից ավագանու անդամի գրավոր և բանավոր հարցերին տրված պատասխանները,
- քաղաքապետի իրավական ակտերը (*որոշումները, կարգադրությունները*),
- քաղաքապետի ամենամյա հաշվետվությունները ավագանու, իր գործունեության և Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

Բացառիկ դեպքերում ՏԻՄ-երը որոշումներ են կայացնում տեղեկություններ հրապարակել պաշտոնական համացանցային կայքերում: Այսպես՝ օրինակ, Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետի 2010 թ. ապրիլի 12-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եվ օտարման գործընթացների կանոնակարգման մասին» N 1541-Ն որոշմամբ սահմանվել է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում համայնքային սեփականության գույքի մրցույթով օտարման մասին հայտարարության տեղադրման պահանջը:

Մեկ այլ հարց է, թե ինչպես են պահպանվում օրենքի պահանջները: Արդյո՞ք նախատեսված տեղեկություններն ու իրավական ակտերը ժամանակին և ամբողջությամբ տեղադրվում են համացանցային պաշտոնական կայքում: Այս առումով, անկասկած, կարևոր է, որ օրենքի մակարդակով սահմանվի տեղեկատվության տրամադրման և հասանելիության ապահովման պահանջները վերահսկող մասնագիտացված մարմնի ստեղծումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, տեղական ինքնակառավարման սկզբունքներից են՝ *համայնքի անդամների առջև ՏԻՄ-երի հաշվետվու լինելը, ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը, տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը*²⁹: Արդի պայմաններում ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունը և թափանցիկությունն առավել արդյունավետ, գործուն և հարմարավետ կարող է ապահովվել համացանցի գրագետ կիրառմամբ և համացանցային պաշտոնական կայքերի միջոցով համապատասխան տեղեկատվությունը ժամանակին քաղաքացիներին հասանելի դարձնելով: Սակայն ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երը պարտավորված չեն համացանցային պաշտոնական կայքեր ունենալ (բացառությամբ Երևանի) և դրանք պատշաճ վիճակում պահել: Հետևաբար, չկան նաև դրանց բովանդակության, գործառնական հնարավորությունների նկատմամբ ձևավորված և հաստատված պահանջներ: Ընդհանրապես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում չկա որևէ դրույթ կամ նորմ, որը ենթադրում կամ պարտադրում է ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման որևէ գործընթաց, էլեկտրոնային եղանակով տվյալների տրամադրում, համացանցի կիրառում, տեղեկատվության հրապարակում պաշտոնական համացանցային կայքերում և այլն, բացառությամբ միայն մեկ դրվագի՝ «Հնարավորության դեպքում այդ տեղեկությունը (ավագանու հերթական նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը – հեղ.) լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով և ինտերնետային ցանցի միջոցով»³⁰:

Ավելին, նույնիսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը չի պարունակում դրույթներ՝ քաղաքացիներին պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին (տեղեկատվություն տրամադրողներին) էլեկտրոնային եղանակով դիմելու հնարավորության ապահովման, տեղեկությունների տրամադրման, համացանցային պաշտոնական կայքերի պարտադիր առկայության, դրանց էջերում համապատասխան տեղեկատվության հասանելիության վերաբերյալ, բացառությամբ միայն մեկ դրվագի՝ «Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի **համացանցային էջի առկայության դեպքում** նաև դրանով»³¹:

Այլ երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք նախատեսում են համացանցային պաշտոնական կայքերի պարտադիր առկայությունը թե՛ պետական կառավարման մարմինների համար և թե՛ ՏԻՄ-երի համար: Այսպես՝ օրինակ, Ռուսաստանի Դաշնության N° 8-Փ3 դաշնային օրենքը «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովման մասին»³² պարտադրում է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ունենալ պաշտոնական համացանցային կայքեր, ինչպես նաև սահմանում է այդ կայքերի բովանդակության և գործառնական հնարավորությունների նկատմամբ հիմնական պահանջները:

Օրենսդրորեն սահմանված չեն նաև *համացանցային կայք, համացանցային պաշտոնական կայք* հասկացությունները: Ձևավորված չեն ընդհանուր պահանջները **պաշտոնական կայքերի** նկատմամբ: Այսօր համացանցը ողողված է անթիվ քանակությամբ կայքերով³³: Յուրաքանչյուր կայք յուրատիպ է, սակայն անհրաժեշտ է հստակորեն տարանջատել պաշտոնական կայքերը (հատկապես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների) ոչ պաշտոնական կայքերից:

ՀՀ ՏԻՄ-երի գործող պաշտոնական կայքերը, դրանց անվանումները, վարման կարգը և այլն հաստատված չեն ՏԻՄ-երի համապատասխան իրավական ակտերով: Համայնքների ավագանիների կանոնակարգերում, աշխատակազմերի կանոնադրություններում չկան դրույթներ համայնքների պաշտոնական կայքերի վերաբերյալ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ՀՀ գործող օրենսդրությունը չի նպաստում ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման գործընթացի ակտիվացմանը, նրանց կողմից համացանցային պաշտոնական կայքերի ստեղծմանը և վարմանը, էլեկտրոնային ծառայությունների մատուցմանը, ինչպես նաև տեղեկատվական հասարակության ձևավորմանը: Իսկ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները բուռն զարգացում են ապրում և թափանցում հասարակական կյանքի բոլոր ոլորտներ: Սակայն դրանց ստեղծման, ներդրման և կիրառման իրավական կարգավորման հարցերն ակնհայտորեն ետ են մնում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումից:

5.2 Հեռահաղորդակցության միջոցների հասանելիությունը և մատչելիությունը

ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման մակարդակն ուղղակիորեն պայմանավորված է հաղորդակցության որակյալ ենթակառուցվածքի առկայությամբ, մասնավորապես՝ համացանցի հասանելիությամբ:

Այսօրվա դրությամբ ՀՀ մարզերի բաժանորդները համացանց մուտք գործելու գրեթե խնդիրներ չունեն: Այդուհանդերձ, համայնքների միջև դեռևս գոյություն ունի զգալի «թվային ճեղքվածք»: Հեռավոր համայնքներում բացակայում է արագ և որակյալ համացանցի հասանելիությունը: Ազգային լայնաշերտ ցանցի բացակայությունը, ինչպես նաև միջազգային կապուղիների սակավությունը և դրանց ցածր թողունակությունը որոշակիորեն խոչընդոտում են ամբողջ երկրի տարածքով ժամանակակից պահանջներին համահունչ տեղեկատվայնացման գործընթացներն իրականացնելու, ապահովելու կապը քաղաքացիների, կազմակերպությունների և պետական/տեղական համակարգերի աշխատողների միջև, որի առկայության դեպքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կառույցների մեծաթիվ առցանց ծառայություններ հասանելի կլինեն Հայաստանի քաղաքացիներին:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր» N7963-AM վարկային համաձայնագրի շրջանակում նախատեսված է «ՀՀ-ում ազգային լայնաշերտ հիմնացանցի և կառավարական ցանցի ներդրման» բաղադրիչի իրականացումը: Համաշխարհային բանկի հետ բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել նշված բաղադրիչի ներքո իրականացնելու ՀՀ սահմանամերձ շուրջ 300 գյուղերում ինտերնետային կապի հասանելիության ապահովման ծրագիրը: Վերջինս իրականացվելու է պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքով՝ պետական այլ շահագրգիռ մարմինների և հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների հետ համատեղ: Ծրագրի շրջանակում նախատեսվում է անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև ինտերնետային հասանելիության ապահովում գյուղերի համապատասխան կառույցներում (գյուղապետարան, դպրոց կամ այլ հասարակական վայր)³⁴:

Մեկ այլ կարևոր խնդիր կապված է որոշ մատակարարների կողմից համացանցի սպառողներին այսպես կոչված **իրական IP հասցեների** (*համացանցային հաղորդակարգի հասցե*) տրամադրման դժվարությունների հետ: Համայնքային սերվերներին իրական IP հասցեների տրամադրումը և համացանցում դրանց հասանելի դառնալը կարող է ապահովել՝

- համայնքներում ներդրված կառավարման տեղեկատվական համակարգերի միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձանց առցանց անընդհատ ծառայությունների տրամադրում (365 օր, 24 ժամ),
- համայնքներում ներդրված կառավարման տեղեկատվական համակարգերի և այլ մարմինների տեղեկատվական համակարգերի (Mulberry, Գանձապետական տվյալների, Կադաստրի, էլեկտրոնային վճարումների և այլն) միջև էլեկտրոնային փոխգործակցություն,
- համացանցային պաշտոնական կայքերի թողարկում սեփական սերվերների վրա,
- համայնքների ղեկավարների, ավագանու անդամների և համայնքային ծառայողների համար հեռահար եղանակով աշխատանքների կատարման հնարավորություն³⁵ (*ապահովվում է հեռահար հասանելիությունը համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերին և տեղեկատվական ռեսուրսներին՝ ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ*),
- համայնքներում ներդրված կառավարման տեղեկատվական համակարգերի հասանելիությունը համայնքային կազմակերպությունների համար:

Հայաստանի մարզերում համացանցի հիմնական մատակարարներ են հանդիսանում շարժական կապի երեք օպերատորները, որոնցից միայն երկուսն են («Արմենթել» և «ՎիվաՍել-ՄՏՍ») տրամադրում իրական IP հասցեներ: «Օրանժ-Արմենիա» օպերատորը, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում համացանցի մատակարարման մեծ ծածկույթ է ապահովում, այնուամենայնիվ, հաճախորդներին չի տրամադրում իրական IP հասցեներ:

Այսպիսով, Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների համաչափ զարգացման ապահովման, համայնքներում համացանցային սերվերների գործարկման, առցանց ծառայությունների տրամադրման, տարբեր գերատեսչությունների տեղեկատվական համակարգերի փոխգործակցության ապահովման, հեռահար եղանակով աշխատանքների կատարման հնարավորությունների ապահովման տեսանկյունից խիստ կարևոր է երկրի ամբողջ տարածքում մատչելի և արագագործ համացանցի հասանելիությունը, ինչպես նաև անհրաժեշտ քանակությամբ իրական IP հասցեների տրամադրման հնարավորության առկայությունը:

2010 թվականը բեկումնային էր համացանցից օգտվելու սակագների տեսանկյունից: Եթե նախկինում անսահմանափակ համացանցը Հայաստանում մատչելի էր բավականին քիչ թվով քաղաքացիների, ապա 2010-ից սկսած՝ սակագները նվազել են մի քանի անգամ՝ հասնելով միջինը ամսական 6 հազար դրամի (մոտ \$15-ի) 1 Մբիթ/վրկ արագությամբ ստանդարտ փաթեթի համար: Սակայն եվրոպական երկրների համեմատ՝ համացանցից օգտվելու գինը շարունակում է մնալ բավականին բարձր: Այսպես, Net Index-ի տվյալներով՝ նույն արագության համար Ռուսաստանում վճարում են \$1.09, ԱՄՆ-ում՝ \$4.01, իսկ Եվրոպայում՝ \$0.5-ից (Բուլղարիա) մինչև \$9.02 (Իրլանդիյա)³⁶: Հաշվի առնելով նաև ՀՀ շարքային քաղաքացիների գնողունակության ցածր մակարդակը, կարելի է փաստել, որ համացանցը դեռևս այդքան էլ մատչելի չէ վերջիններիս համար: Այն դեռևս մատչելի չէ նաև փոքր համայնքների ՏԻՄ-երի համար, որոնք համապատասխան ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով դեռևս չեն օգտվում համացանցից կամ կարողանում են օգտվել համեմատաբար ցածր արագությամբ համացանցից:

Համացանցի մատակարարների և փորձագետների կարծիքով համացանցի գները Հայաստանում կնվազեն կապի ալիքների զարգացման, ինչպես նաև այս շուկայում մրցակցության բարձրացման հաշվին:

5.3. Դոմենային անուններ

ՏԻՄ-երը համայնքների պաշտոնական համացանցային կայքերը գործարկելու նպատակով .AM տիրույթում (առավելապես) գրանցում են դոմենային անուններ: Տրամաբանական է, որ յուրաքանչյուր համայնքի պաշտոնական կայքի դոմենային անունը պետք է համապատասխանի տվյալ համայնքի անվանմանը: Դա ընդունված է ամբողջ աշխարհում, բնականաբար այդպես են վարվում նաև ՀՀ ՏԻՄ-երը (*օրինակ՝ kapan.am, vanadzor.am, artik.am, sisian.am, alaverdi.am, parakar.am, hovtashat.am, vardenis.am, spitak.am, hrazdan.am, dilijan.am, charentsavan.am, ejmiatsin.am, sipanik.am, artashat.am, kasakh.am, vayk.am, agarak.am, lusarat.am* և այլն):

ՏԻՄ-երը համեմատաբար նոր են սկսել դոմենային անուններ գրանցել և այդ հարցում խնդիրներ են ունենում կապված իրենց համայնքների անուններով դոմենային անուններն արդեն այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից զբաղեցրած (գրանցած) լինելու հետ (*օրինակ՝ goris.am – Mkhitar Mezhlumyan, gyumri.am – Diananet LTD, aboveyan.am – Khachatryan Vladimir, bjni.am – RRR Mineral Waters Plant CJSC, jermuk.am – Jermuk Mayr Gortsaran CSJC, tashir.am – Khachatryan Levon, ararat.am – Development ways Ltd, gavar.am – Kolozyan Khachatur, sevan.am – David Khachatryan, armavir.am – Parity-Invest LLC, metsamor.am – Hayk Hayrapetyan. oshakan.am – Gevorg Darbinyan, tatev.am – National Competitiveness Foundation of Armenia* և այլն)³⁷: Այդ պատճառով ՏԻՄ-երը գրանցում են դոմենային անուններ՝ հավելելով իրենց համայնքի անունին *city* (*օրինակ՝ goriscity.am, gyumricity.am, dilijancity.am, ijevancity.am, araratcity.am, tashircity.am*), *qaghaqapetaran* (*օրինակ՝ gavarigaghaqapetaran.am*), *hamaynq* (*օրինակ՝ berdhamaynq.am, gladzorhamaynq.am*) բառերը կամ ընտրում գրանցման այլ եղանակներ (*օրինակ՝ kotayk-aboveyan.am, bjni-hamaynq.am, kyavar.com, metsamor.do.am* և այլն):

ՏԻՄ-երը կարող են դատական կարգով վիճարկել տվյալ հարցը՝ պահանջելով իրենց տրամադրել այլ անձանց կողմից համանուն համայնքների անուններով արդեն գրանցված դոմենային անունները, հիմնվելով «ՀՀ աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասին դրույթների վրա³⁸՝ «1. Եթե աշխարհագրական նշումը, ծագման տեղանունը կամ երաշխավորված ավանդական արտադրանքը պահպանվում է սույն օրենքի համաձայն, ապա **ցանկացած դոմեն անվանման գրանցումը, որի օգ-**

տագործումը համապատասխանում է սույն օրենքի 14-րդ կամ 15-րդ հոդվածներում նշված իրավիճակներից որևէ մեկին, **ենթակա է չեղյալ ճանաչման (եթե դոմեն անվանման գրանցումն իրականացվել է աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի պահպանության սկզբի թվականից հետո)**»։ Սակայն օրենքի սույն հոդվածի դրույթները դոմեն անվանման վերը նշված խնդրի լուծման տեսանկյունից առոչինչ են դառնում, երբ անդրադառնում ենք օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասին. «2. Սույն օրենքով նախատեսված իրավական պահպանության իրավունքը տարածվում է միայն գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի նկատմամբ, բացառությամբ բնական և հանքային ջրերի»։

Այդուհանդերձ, տարածայնությունները, որոնք վերաբերում կամ առաջանում են դոմենային անունների գրանցման և օգտագործման ընթացքում, կարող են լուծում ստանալ ըստ Մտավոր Սեփականության Համաշխարհային Կազմակերպության (ՄՍՀԿ) UDRP (Uniform Domain Name Dispute Resolution Policy) արձանագրության (<http://www.wipo.int/amc/en/domains/guide/>)։

.AM տիրույթում դոմենային անունների գրանցման և օգտագործման ընթացքում առաջացող տարածայնության, ներառյալ ՄՍՀԿ-ի UDRP-ի որոշման բողոքարկման, լուծման համար .AM տիրույթի գրանցորդը կարող է դիմել ՀՀ համապատասխան դատարան։ Կարծում ենք, ՄՍՀԿ-ի UDRP-ի որոշումը որոշիչ դեր կունենա դատարանի վճիռը կայացնելու ժամանակ³⁹։

Սակայն, ընդհանուր առմամբ, միջազգային վիճակագրությունն այդքան էլ բարվոք չէ համայնքային իշխանությունների կողմից դոմենային անունների վեճերը շահելու առումով։ UDRP-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգը կողմնորոշված չէ դոմենային անունների նկատմամբ պետական կառույցների շահերի պաշտպանությանը։ Ընթացակարգը պաշտպանում է ապրանքային նշանի նկատմամբ իրավունքներ (այդ թվում նաև չգրանցված) ունեցողներին, այդ պատճառով էլ այն սակավաթիվ դեպքերում, երբ քաղաքները և երկրները կարողացել են դատական վեճերի արդյունքում ստանալ դոմենի նկատմամբ իրավունքներ, նրանք հիմնավորել են իրենց պահանջները՝ ելնելով ապրանքային նշանների իրավունքներից։ Դոմենային անվան նկատմամբ իրավունքի հիմնավորման անկատարությունը և օբյեկտների նեղ շրջանակը բազմիցս ենթարկվել է նաև մասնագետների քննադատությանը։ Ներկայացված դիտողությունները ընդունված են և սպասվում է, որ շուտով UDRP արձանագրությունում կկատարվեն համապատասխան ուղղումներ՝ կողմնորոշված նրանով պաշտպանվող օբյեկտների ընդլայնմանը։ Սպասվող փոփոխությունները պետք է պարզություն և հստակություն մտցնեն քաղաքների (համայնքների) և պետությունների դոմենային անունների նկատմամբ պահանջների հարցերում։⁴⁰

ՀՀ համայնքների 47 անուններ կրկնվում են 2–4 անգամ⁴¹։ Միևնույն անվանմամբ համայնքներ կան տարբեր մարզերում (Նույնիսկ միևնույն մարզում), կան նաև միևնույն անվանմամբ և՛ քաղաքային, և՛ գյուղական համայնքներ, ինչը ևս կարող է խնդիրներ առաջացնել դոմենային անունները համայնքների անուններով գրանցելու ժամանակ։ Օրինակ, եթե Սյունիքի մարզի Ագարակ գյուղական համայնքը գրանցի `agarak.am` դոմենային անունը, ապա միևնույն մարզի Ագարակ քաղաքային համայնքը և Լոռու մարզի Ագարակ գյուղական համայնքը կունենան խնդիրներ իրենց համայնքների անվանումներին համահունչ դոմենային անուններ գրանցելու հարցում։

Լուրջ խնդիրներ են առաջանում նաև համայնքների անվանումներով լատինատառ դոմենային անունները գրանցելու ժամանակ (հատկապես երբ անվանման մեջ կան յուրահատուկ տառեր՝ ձ, դ, ճ, խ, ց)։ Այստեղ հիմնական դժվարությունները պայմանավորված են այն հանգամանքով, թե՛ ինչ անվամբ է նախ գրանցվում այս կամ այն կայքը, և թե՛ ինչ անվամբ են համացանցում այցելուները փնտրում այս կամ այն համայնքի կայքը։ Այսպես, օրինակ Արագածոտնի մարզի Աղծք գյուղական համայնքի պաշտոնական կայքը `.am` տիրույթում գրանցված է `aghodzq` անվամբ (`aghodzq.am`)։ Դժվար է պատկերացնել թե տվյալ համայնքի քանի քաղաքացի կփորձի Աղծք համայնքի կայք մուտք գործել համար համացանցային դիտարկիչի հասցեների տողում լրացնելով `aghodzq.am` անվանումը։ Հայաստան դոմենային տիրույթի ձեռքբերմամբ կլուծվեն նշված խնդիրները։ Համացանցն առավել հասանելի կդառնա Հայաստանի քաղաքացիների, (հատկապես հեռավոր շրջաններում բնակվող) համար։ Այսպիսով, օրինակ `aghodzq.am` – ի փոխարեն կարող է գրանցվել `աղծք.հհ` դոմենային անունը, `chochkan.am`-ի փոխարեն `ճոճկան.հհ` և այլն։

20-ից ավել երկրներ⁴² արդեն իսկ կիառում են ազգային տառատեսակներով դոմենային անուններ։ Օրինակ Ռուսաստանի տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ կիրառում են ռուսատառ դոմենային անուններ. `екатеринбург.рф`, `псков.рф`, `иваново.рф` և այլն։ `.рф` տիրույթում գրանցված դոմենային անունների թիվն անցել է 820 հազարից⁴³։

5.4 ՏԻՄ–երի մարդկային և մասնագիտական ներուժը

ՏԻՄ–երի կողմից մատուցվող ծառայությունների որակը, դրանց մատչելիությունը, ինչպես նաև արդյունավետությունը մեծապես կախված են ՏԻՄ–երի մարդկային և մասնագիտական ներուժից: Արդի ժամանակներում առավել կարևորվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների առկայությունը ՏԻՄ–երում: Ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մի շարք խնդիրներ:

Ներկայումս համայնքային ծառայողների վարձատրության համակարգն անմրցունակ է մասնավոր հատվածի համեմատ, որը հանգեցնում է բարձր որակավորման մասնագետների արտահոսքին դեպի մասնավոր ոլորտ: Համայնքային ծառայողների վարձատրության համակարգն ու մակարդակը չեն նպաստում որակյալ աշխատակազմի պահպանմանը: Նույնիսկ խոշոր համայնքներում, որոնք ունեն համեմատաբար մեծ ֆինանսական հնարավորություններ, համայնքային ծառայողների աշխատավարձերի դրույքաչափերը տատանվում են 60000 դրամից մինչև 150000 դրամի շրջանակներում:

ՀՀ պետական մարմիններում, կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպություններում աշխատողների մոտիվացման և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Սոցիալական փաթեթի հաստատման կարգը հաստատելու մասին» N 1917–Ն որոշմամբ սահմանվել է «Սոցիալական փաթեթ», որը նշված ոլորտների աշխատակիցների, ինչպես նաև նրանց անմիջական ընտանիքների անդամների առողջական, կրթական և այլ խնդիրների ապահովման կամ ընտրական միջոցառումների համախումբ է: Մեկ տարվա սոցիալական փաթեթի սահմանաչափը մեկ անձի կամ մեկ դրույքի համար սահմանվել է 132000 դրամ⁴⁴: Չնայած այն հանգամանքին, որ և՛ քաղաքացիական ծառայողները, և՛ համայնքային ծառայողները հանրային ծառայողներ են հանդիսանում, իսկ սոցիալական փաթեթի հատկացման կարգը սահմանվել է՝ հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 3–րդ կետը, այնուամենայնիվ, համայնքային ծառայողների համար «Սոցիալական փաթեթ» չի նախատեսվել:

Համայնքային ծառայողների աշխատավարձերի ցածր մակարդակը, «Սոցիալական փաթեթի» բացակայությունը խոչընդոտում են նրանց աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Այս իրավիճակը հղի է կոռուպցիոն ռիսկերով, ինչը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ՏԻՄ–երի թափանցիկ գործունեության համար:

Հաջորդ կարևոր խնդիրը համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների բարձր որակի ապահովման հնարավորության հարցն է: Այս ոլորտում առաջընթաց կարելի է համարել 2005 թվականից ներդրված համայնքային ծառայության համակարգի ներդրումը: «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրվում են ՀՀ համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորվում են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, համայնքային ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, համայնքային ծառայության կադրերի ռեզերվի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ⁴⁵: ՀՀ բոլոր համայնքների աշխատակազմերում առկա համայնքային ծառայության պաշտոնների ընդհանուր թիվը 2013 թ. մարտի 1-ի դրությամբ կազմել է 6802⁴⁶:

Համայնքների ղեկավարները, նրանց տեղակալները, խորհրդականները, ռեֆերենտները և օգնականները, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, համայնքային ծառայողներ չեն, մասնագիտական գործունեություն չեն իրականացնում և մասնագիտական պատրաստվածության առումով նրանց նկատմամբ օրենսդրորեն որևէ պահանջ չի ներկայացվում: Հետևաբար, համայնքներում հանրային ոլորտի ծառայությունների մատուցման պատասխանատվությունը հիմնականում ընկնում է համայնքային ծառայողների վրա: Այդ իսկ պատճառով մասնագիտական լուրջ կարողություններ ունեցող անձանց ներգրավումը և նրանց երաշխավորված, կայուն ու շարունակական աշխատանքի ապահովման հարցը տեղական ինքնակառավարման համակարգի գերակա խնդիրներից է:

Սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների, ինչպես նաև համայնքային ծառայողների ատեստավորումների օբյեկտիվության հարցերում դեռևս կան որոշ խնդիրներ: Հայտնի են նաև դեպքեր, երբ նոր համայնքի ղեկավար ընտրվելու դեպքում բազմաթիվ որակյալ մասնագետներ (այդ թվում՝ համայնքային տեղեկատվական համակարգերին տիրապետող) ինչ-ինչ պատճառներով՝ իրենց դիմումի համաձայն դուրս են գալիս համակարգից, որոնց հաճախ փոխարինելու են գալիս ավելի ցածր որակավորում և անհապաղ ուսուցման (վերապատրաստման) կա-

րիք ունեցող նոր անձինք:

Համայնքային ծառայողների գիտելիքների և ունակությունների վերաբերյալ պահանջները ամրագրված են համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում: Թեև նշված անձնագրերի և՛ օրինակելի ձևերը⁴⁷, և՛ բոլոր հաստատված անձնագրերը պարունակում են պաշտոն զբաղեցնելու համար համայնքային ծառայողին ներկայացվող **համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակության** վերաբերյալ պահանջներ, սակայն, դիտարկումները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես ավագ տարիքի, ինչպես նաև գյուղական համայնքների համայնքային ծառայողների մեծ մասը չունեն համապատասխան հմտություններ կամ դրանք բավարար չեն: Բացի այդ, հստակեցված չէ, թե որն է համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակության **սահմանը** և ինչ **չափանիշներով** են դրանք գնահատվում: Քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաները և կառավարման տեղեկատվական համակարգերը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի շատ են մուտք գործում ՏԻՄ-եր և համայնքային ծառայողներն իրենց գործառնությունների զգալի մասն իրականացնում են ներդրված հատուկ տեղեկատվական համակարգերի և ծրագրերի միջոցով, ապա խիստ կարևոր է դառնում այդ **համակարգերի աշխատանքին տիրապետելու պահանջների ամրագրումը համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում**: Այլապես, ուսուցանված և բարդ կառավարման տեղեկատվական համակարգերի աշխատանքին տիրապետող մասնագետին **կարող են փոխարինել** անձինք, որոնք չեն տիրապետում նշված համակարգերին, չնայած այն հանգամանքին, որ նրանք ունեն համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություններ: Արդյունքում կարող է ստացվել /և հաճախ այդպես էլ լինում է/, որ աշխատանքի ընդունված համայնքային ծառայողը չի տիրապետում այն համակարգերին, որի միջոցով պետք է իրականացնի իր աշխատանքային պարտականությունները, ինչի պատճառով տուժում է նրա աշխատանքի որակը և արդյունավետությունը, իսկ հաճախ էլ համայնքում ներդրված և գործող տեղեկատվական համակարգի աշխատանքը դադարեցվում է:

Կարևորվում է նաև համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական, շարունակական կատարելագործման հարցը: Այս առումով հարկ է նկատել, որ համայնքային ծառայողների ուսուցման, վերապատրաստման, որակավորման բարձրացման խնդիրները ամրագրված են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում: Այսպես, օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման: Բացի այդ, վերապատրաստումն անցկացվում է նաև համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով համայնքային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում համայնքային ծառայողի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. մարտի 2-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին» N 27-Ա հրամանով հաստատված է համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացի ծրագիրը⁴⁸, որտեղ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժնին հատկացված է **ընդամենը 6 դասաժամ** (ընդհանուր 72 դասաժամից), իսկ Երևան քաղաքի համայնքային ծառայողների համար՝ **ընդամենը 4 դասաժամ** (ընդհանուր 72 դասաժամից): Փորձը ցույց է տալիս, որ հաճախ այդ դասընթացները վարելու համար բացակայում են **համակարգչային տեխնիկայով հագեցած լսարանները**: Այդ պայմաններում և 4–6 դասաժամի ընթացքում հնարավոր է համայնքային մասնագետներին տրամադրել ընդամենը ճանաչողական բնույթի տեղեկատվություն, այնինչ խնդրի լուծումը պահանջում է արմատապես վերանայել համայնքային ծառայողների պարտադիր վերապատրաստման «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» թեմայի հետ կապված մոտեցումները: Բացի այդ, քանի որ ժամանակակից տեղեկատվական համակարգերը կիրառվում են համայնքային ծառայողների կողմից իրականացվող տարբեր աշխատանքների կատարման ընթացքում (*համայնքի բյուջեի տրամադրում, համայնքային գույքի կառավարում, գործառնություն, առևտրի և սպասարկման, քաղաքաշինության, հանրային ծառայությունների մատուցման և այլ բնագավառների գործառնություններ*), անհավանալի է նաև վերապատրաստման ծրագրերի այլ թեմաներում տեղեկատվական տեխնոլոգիաների բաղադրիչների բացակայությունը:

Վերապատրաստման դասընթացները հիմնականում կազմակերպվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներով կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների հաշվին: ՏԻՄ-երը դեռևս հակված չեն իրենց մասնագետներին վերապատրաստելու նպատակով **համայնքային բյուջեներից հատկացումներ կատարել**: Ուսումնասիրված 18 համայնքներից (*Երևան, Վանաձոր, Ապարան, Ալավերդի, Վեդի, Հովքաշատ, Սիփանիկ, Փարաքար, Վարդենիս, Սիսիան, Քաջարան, Ագարակ, Գորիս,*

Ջերմուկ, Վայք, Տաշիր, Նոր Գեղի, Սառնաղբյուր)⁴⁹ միայն մեկի՝ Երևան համայնքի 2013թ. բյուջեում է նախատեսված աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների ծախսեր (4233 տնտեսագիտական հոդվածով)՝ 5.605 հազ. դրամի չափով, ինչը կազմում է համայնքի վարչական բյուջեի մոտ 0.009%-ը⁵⁰:

ՏԻՄ-երում կիրառվող տեղեկատվական համակարգերի ուսուցման և վերապատրաստման գործընթացը կանոնակարգված չէ: Տեղեկատվական համակարգերի ներդրման գործընթացին զուգահեռ, ավելանում է համապատասխան մասնագետների ուսուցման և վերապատրաստման կարիքը, և, իհարկե, մասնագիտացված ուսումնական կենտրոնների (կազմակերպությունների) կայուն, հուսալի ու արդյունավետ գործունեության ապահովման պահանջը:

Այսօր հանրապետությունում չկա համայնքային ծառայողների վերապատրաստման մի այնպիսի կենտրոն, որը կարող է ոչ միայն ապահովել վերապատրաստման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերն ու ծրագրերը, այլ նաև որոշակիորեն իր վրա վերցնել համայնքային ծառայողների վերապատրաստման ամբողջ գործընթացը: Հատկապես լուրջ հարցեր են առաջանում նեղ մասնագիտական դասընթացների կազմակերպման ժամանակ, երբ պահանջվում են այդ ոլորտների բարձրորակ ուսուցանող մասնագետներ, տեխնիկապես հագեցած լսարաններ, գործող կառավարման տեղեկատվական համակարգեր, մասնագիտացված գրականություն, ուսումնական նյութեր և այլն:

Ներկայումս Հայաստանում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի ուսուցմամբ (և մասնագետների վերապատրաստմամբ) զբաղվում են հիմնականում երկու կազմակերպություններ՝ «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությունը (զբաղվում է համայնքներում տեղադրված Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (<ԿՏՀ> ուսուցմամբ)⁵¹ և «Վեկտոր պլուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (զբաղվում է համայնքներում ներդրված Գույքային հարկերի հաշվառման ավտոմատացված կառավարման համակարգի ուսուցմամբ): Չնայած այն հանգամանքին, որ տվյալ կազմակերպությունները վերջին տարիների ընթացքում լուրջ աշխատանքներ են կատարել ՏՏ ոլորտի համայնքային մասնագետների ուսուցման և վերապատրաստման ուղղությամբ, այնուամենայնիվ, կա ուսուցման ամբողջ գործընթացի ինստիտուցիոնալացման խնդիր: Առկա են նաև բազմաբնույթ տեխնիկական խնդիրներ՝ կահավորված և ժամանակակից տեխնիկայով հագեցած մեծ դասասենյակների բացակայություն, ֆինանսական միջոցների քրոնիկ անբավարարություն և այլն:

5.5. Համայնքների զարգացման ծրագրեր

Համայնքի ղեկավարը մշակում և ավագանու հաստատման է ներկայացնում համայնքի քառամյա զարգացման ծրագիրը⁵²: Սակայն ՏԻՄ-երն իրենց համայնքների զարգացման քառամյա ծրագրերում դեռևս չեն ներառում տեղեկատվայնացմանը և տեղեկատվական հասարակության ձևավորմանն ու զարգացմանն ուղղված բաղադրիչներ: Միայն խոշոր համայնքների (օրինակ, Երևան⁵³, Վանաձոր⁵⁴) զարգացման ծրագրերում կան որոշ սահմանափակ մոտեցումներ՝ ուղղված տեղեկատվայնացման խնդիրների լուծմանը: Մինչդեռ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները անխուսափելիորեն մուտք են գործում համայնքներ, ՏԻՄ-երը սկսում են կիրառել զարգացած տեղեկատվական համակարգեր, քաղաքացիներին տրամադրել առցանց ծառայություններ և այլն: Եվ այս ամենը դեռևս արվում է տարերային ձևով՝ չծրագրավորված և չկանոնակարգված: Ավելին՝ որևէ համայնք չունի տեղեկատվայնացման և տեղեկատվական հասարակության ձևավորման մշակված ու հաստատված հայեցակարգ և/կամ ռազմավարություն: Հետևաբար, եթե չկան տեղեկատվայնացման հայեցակարգային մոտեցումներ, մշակված ռազմավարություն, և զարգացման ծրագրերում ներառված չեն ՏԻՄ-երի տեղեկատվայնացման և համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորմանը միտված բաղադրիչներ, ապա ֆինանսական միջոցների հատկացումներն այս ուղղությամբ չեն կարող լինել նպատակային և արդյունավետ: Այնինչ, գործընթացի հաջողությունը պայմանավորված է հարցին համալիր և տնտեսագիտորեն ճշգրիտ հաշվարկված մոտեցումների ցուցաբերմամբ:


Այսօր ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով նրանց գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման, ինչպես նաև համայնքներում տեղական տեղեկատվական հասարակության զարգացման գործընթացները դեռևս չեն գտել իրենց ուրույն տեղը համայնքների զարգացման (այդ թվում նաև քառամյա) ծրագրերում:

5.6. Ֆինանսական միջոցները

Զարգացած տեղեկատվական համակարգերի, համացանցային կայքերի մշակումը, ներդրումը և սպասարկումը, տեղեկատվական հասարակության ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը պահանջում են զգալի միջոցներ: Միայն որոշ խոշոր համայնքներ հնարավորություն ունեն իրենց բյուջեներից համապատասխան մասհանումներ կատարելու տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և զարգացման համար: Սակայն այդ մասհանումները զգալի չեն և ծառայում են հիմնականում որոշ տեխնիկական միջոցներ ձեռք բերելուն, համացանցի և համայնքային կայքի սպասարկման վճարումներ կատարելուն: Առավել ևս, քանի որ համայնքների քառամյա զարգացման ծրագրերում դեռևս բացակայում են ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման և համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորման ծրագրային բաղադրիչները, ապա դժվար է ակնկալել, որ այդ համայնքների բյուջեներում կարող են լինել համապատասխան ծրագրային մոտեցումներ: Եթե ներդրումներ են կատարվում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման համար, ապա յուրաքանչյուր քաղաքապետարան կամ գյուղապետարան տեղեկատվայնացման աշխատանքներն իրականացնում է իր ձևով՝ «օրվա պահանջից ելնելով»: Ծրագրային մոտեցումների և միասնական մեթոդաբանության բացակայությունը բերում է միջոցների ոչ արդյունավետ ծախսմանը, իսկ ստացած արդյունքներն էլ հիմնականում լինում են կարճաժամկետ:

Տարեցտարի համայնքների բյուջեների եկամուտներն աճում են, իսկ համակարգչային տեխնիկայի և համացանցի օգտագործման գները՝ նվազում, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում ՏԻՄ-երի կողմից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառման և համայնքներում տեղեկատվական հասարակության զարգացման համար:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքում հրապարակված տվյալների, ՀՀ համայնքների (առանց Երևանի) համախառն բյուջեի փաստացի եկամուտները 2012 թվականին 2007թ. նկատմամբ ավելացել են 13.32 մլրդ դրամի չափով կամ աճը կազմել է մոտ 53.3%: Առավել կտրուկ աճել են Երևան քաղաքի բյուջեի եկամուտները⁵⁵ (նկար 3):



Նկար 3. ՀՀ համայնքների 2007–2012 թթ. բյուջեների փաստացի եկամուտները, մլրդ դրամ

Չնայած այն իրողությանը, որ համայնքների բյուջեների եկամուտները տարեցտարի աճում են, իսկ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներն ավելի մատչելի են դառնում, այնուամենայնիվ, դեռևս վաղ է խոսել համայնքների (հատկապես փոքր և միջին) կողմից տեղեկատվայնացման գործընթացի և համայնքներում տեղեկատվական հասարակության զարգացման համար լուրջ ներդրումներ կատարելու հնարավորությունների մասին: Հաշվի առնելով խնդրի կարևորությունը և համայնքների ֆինանսական միջոցների սղությունը, ՀՀ կառավարությունը և միջազգային կազմակերպություններն իրականացրել են ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացմանն ուղղված մի շարք ծրագրեր: Այսպես՝ օրինակ, պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում 2007–2009թթ. ընթացքում մշակվեց և ՀՀ 225 համայնքներում ներդրվեց համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ)⁵⁶: Այդ համայնքներին նվիրաբերության կարգով տրամադրվել է նաև համակարգչային տեխնիկա (համակարգիչներ՝ 520 հատ և այլ տեխնիկական միջոցներ) և լիցենզավորված ծրագրային միջոցներ:

Այդուհանդերձ, ՏԻՄ-երում պատշաճ մակարդակով տեղեկատվայնացման խնդիրները լուծելու և տեղեկատվական հասարակություն ձևավորելու ու զարգացնելու համար պահանջվում են լուրջ ֆինանսական ներդրումներ, որոնք կարող են իրականություն դառնալ համայնքների բյուջեներից կատարվող մասհանումների և այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին (համատեղմամբ): Առավել կարևոր է, որ, տեղեկատվայնացման գործընթացներն իրականացնելիս ՏԻՄ-երն ուղղորդվեն մշակված ծրագրերով և լինեն հետևողական տեղադրված տեղեկատվական համակարգերի շարունակական պահպանման ու զարգացման հարցերում, ինչը կպահանջի մշտական հիմունքներով ծախսեր կատարել այս ուղղությամբ: Այդ ծախսերի մոտավոր կառուցվածքը հետևյալն է՝ *մշտական և անսահմանափակ համացանցի օգտագործման համար վճարներ, ներդրված տեղեկավարական համակարգերի սպասարկման վճարներ, պաշտոնական կայքի դոմեյնային անվան պահպանման տարեկան վճար, կայքի հոսթինգի համար վճար (եթե կայքը տեղադրված է այլ կազմակերպության սերվերում), տեխնիկական միջոցների վերանորոգման և արդիականացման ծախսեր, մասնագետների վերապատրաստման ծախսեր*: Բնականաբար, խոշոր համայնքների համար կպահանջվեն ավելի մեծ գումարներ:


5.7. Տեխնիկական միջոցների սակավությունը և ցածր որակը

ՏԻՄ-երի կողմից ժամանակակից կառավարման տեղեկատվական համակարգերն առավել արդյունավետ շահագործելու համար անհրաժեշտ է, որպեսզի քաղաքապետարանները և գյուղապետարանները լինեն հագեցած համապատասխան քանակությամբ և համապատասխան որակով համակարգչային տեխնիկայով: Անհնար է, օրինակ, կազմակերպել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն այն քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմում, որտեղ աշխատակիցները չունեն ցանցին միացված համակարգիչներ կամ դրանց քանակը բավարար չէ: Այսօր կարելի է փաստել, որ, եթե ՀՀ նախարարությունների և մարզպետարանների ղեկավար և մասնագիտական աշխատակազմերի յուրաքանչյուր անդամի տրամադրության տակ կա ներքին համակարգչային ցանցին (հաճախ նաև համացանցին) միացված համակարգիչ, ապա քաղաքապետարաններում և գյուղապետարաններում միջին հաշվով 3 աշխատակցից ընդամենը մեկ աշխատակցն ունի համապատասխան որակի համակարգիչ: Եթե բոլոր պետական կառավարման մարմինների աշխատակազմերի վարչական շենքերում ստեղծված են ներքին համակարգչային ցանցեր, ապա այդ ցուցանիշը ՏԻՄ-երի պարագայում կազմում է ընդամենը մոտ 22%:

ՀՀ 915 քաղաքապետարաններում և գյուղապետարաններում կան 8100-ից ավելի աշխատողներ (համայնքների ղեկավարներ – 915 մարդ, համայնքային ծառայողներ՝ մոտ 6050 մարդ⁵⁷, հայեցողական պաշտոններ զբաղեցնող աշխատակիցներ (*համայնքի ղեկավարների տեղակալներ, խորհրդականներ, օգնականներ և այլն*)՝ մոտ 1160), որոնց ամենօրյա աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է համակարգչային տեխնիկայի կիրառումը:

Ստորև ներկայացված են ՀՀ 10 մարզերի բոլոր 914 համայնքների աշխատակազմերում 01.06.20013 թ. դրությամբ առկա համակարգչային տեխնիկայի ցուցանիշները⁵⁸:

Հ/Հ	Մարզը	Համայն- քների թիվը	Բնակչու- թյան թիվը, հազար մարդ	Համակարգիչներ				Տպող սարքեր	Պատ- կերա- մուտ- ներ	Անխա- փան սնուցման սարքեր
				Ընդա- մենը	>=P4	<P4	>=P4, %			
1	Արագածոտն	114	138.6	215	185	30	86.05%	144	55	90
2	Արարատ	97	280.6	369	299	70	81.03%	266	122	191
3	Արմավիր	97	286.2	370	327	43	88.38%	232	88	157
4	Գեղարքունիք	92	242.5	288	240	48	83.33%	196	56	166
5	Լոռի	113	282.1	364	318	46	87.36%	245	121	185
6	Կոտայք	67	282.1	429	385	44	89.74%	278	93	217
7	Շիրակ	119	282.0	371	302	69	81.40%	243	109	126
8	Սյունիք	109	152.9	279	224	55	80.29%	186	82	138
9	Վայոց ձոր	44	56.0	119	110	9	92.44%	91	30	81
10	Տավուշ	62	134.7	203	171	32	84.24%	136	36	116
ԸՆԴԱՄԵՆԸ		914	2137.5	3007	2561	382	83.90%	1634	535	1134



Նկար 4. Մեկ քաղաքապետարանին կամ գյուղապետարանին բաժին ընկնող P4 և ավելի հզոր համակարգիչների միջին թիվը, ըստ մարզերի (2013 թ. Հունիսի 1-ի դրությամբ)

Ակնհայտ է, որ ներկայացված տվյալները չեն խոսում քաղաքապետարաններում և գյուղապետարաններում առկա տեխնիկական լուրջ հնարավորությունների մասին: Ավելին, դրանց սակավությունը, որակը և բարոյական մաշվածությունը լուրջ խոչընդոտներ են ստեղծում տեղեկատվայնացման բնագավառում էական հաջողությունների հասնելու ճանապարհին: Առկա 3007 համակարգիչներից 382-ը (մոտ 13%-ը) բավական հին են և ժամանակակից տեղեկատվական համակարգերի շահագործման համար ոչ կիրառելի: Համակարգիչների 62%-ից ավելին շահագործվում են առանց անխափան սնուցման սարքերի, ինչը նշանակում է, որ այդ համակարգիչների աշխատանքը հուսալի չէ: ՏԻՄ-երում քիչ են նաև այլ տեխնիկական միջոցները (տպող սարքեր, պատկերամուտներ (սկաներներ) և այլն):

Լուրջ խնդիրներ կան՝ կապված համայնքներում օգտագործվող սերվեր համակարգիչների (Server) հետ:

Այսպես՝ 8 քաղաքապետարաններում և մոտ 200 գյուղապետարաններում, որտեղ տեղադրված է ՀԿՏՀ, որպես սերվեր համակարգիչներ են ծառայում միջին հզորության սովորական համակարգիչները (հիմնականում 2008թ. արտադրության), որոնք չունեն սերվեր համակարգիչներին բնորոշ տեխնիկական բնութագրեր: Նշված համայնքներում տեղադրված սերվերների մեծ մասը համակարգիչների սակավության պատճառով առանձնացված չեն և ծառայում են նաև որպես սպասառու համակարգիչներ (Client): Դրանցում, բացի սերվերային հատուկ ծրագրային ապահովումից և ՀԿՏՀ-ից, տեղադրված են նաև որոշ կիրառական ծրագրեր, որոնց միջոցով աշխատակիցները գրանցում և մշակում են տարբեր տիպի տվյալներ, աշխատում համացանցում և այլն: Առանձնացված չլինելը զգալիորեն նվազեցնում է սերվերների հուսալիության աստիճանը⁵⁹: Քաղաքապետարաններում և գյուղապետարաններում, բացի հիմնական սերվերներից, չկան պահեստային սերվերներ, ինչպես նաև տվյալների հուսալի պահպանման արտաքին կուտակիչներ (Data Storage): Եթե որոշ խոշոր համայնքների ՏԻՄ-եր կարող են պահպանել և կառավարել բարդ սերվերային համակարգերը, ապա փոքր, մասնագիտական և ֆինանսական թույլ ներուժ ունեցող համայնքների համար դա լուրջ խնդիր է: Հաղորդակցության որակյալ ենթակառուցվածքի առկայության պայմաններում նշված խնդրի լավագույն լուծում կարող է հանդիսանալ տվյալների կենտրոնների (Data Centers⁶⁰) ստեղծումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգչային տեխնիկայի զգալի մասը ՏԻՄ-երը ստացել են ՀՀ կառավարության և տարբեր միջազգային կառույցների կողմից իրականացված ծրագրերի շրջանակներում, կարելի է եզրակացնել, որ ՏԻՄ-երը դեռևս հակված չեն կամ չեն կարողանում զգալի ներդրումներ կատարել համակարգչային և այլ ժամանակակից տեխնիկական միջոցներ ձեռք բերելու համար: Սակայն ներդրված տեղեկատվական համակարգերի շահագործումը և դրանց նկատմամբ պահանջների ավելացումը կարող են **արմատապես փոխել** ՏԻՄ-երի վերաբերմունքը հարցի լուծման նկատմամբ:

5.8. Կառավարման տեղեկատվական համակարգերը

Արդյունավետ աշխատելու և պատշաճ կերպով իրենց լիազորություններն իրականացնելու համար ՏԻՄ-երը պետք է ունենան և կիրառեն զարգացած տեղեկատվական համակարգեր:

Տարիների ընթացքում ՏԻՄ-երի համար մշակվել են տարբեր տեղեկատվական համակարգեր և ծրագրային միջոցներ, որոնք ապահովում են ՏԻՄ-երի կողմից կատարվող աշխատանքների ավտոմատացումը՝ բարձրացնելով դրանց արդյունավետության աստիճանը: Այսօր համայնքներում կիրառվում են հիմնականում 4 տեղեկատվական համակարգեր.

- Գույքային հարկեր վճարողների հաշվառման և գույքային հարկերի հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգը,
- Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ),
- ՔԿԱԳ տարածքային բաժինների էլեկտրոնային կառավարման համակարգը (ՔԿԱԳ ՏԲ ԷԿՀ),
- «ԷԼ ՓԱՍ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը (կիրառվում է Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում):

ՀՀ ՏԻՄ-երի կողմից գույքային հարկեր (գույքահարկ և հողի հարկ) վճարողների հաշվառման և գույքային հարկերի հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգի վարման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի «Գույքահարկի մասին» եվ «հողի հարկի մասին» հայաստանի հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների մասին N 192-Ն որոշմամբ: Այդ համակարգը «Վեկտոր պլյուս» ՍՊԸ կողմից ներդրված է ՀՀ 487 համայնքներում, 51 միջհամայնքային կառույցներում և 17 համայնքների միություններում՝ ապահովելով ՀՀ բոլոր 915 համայնքների գույքային հարկերի հաշվառման գործընթացը: Համակարգի աշխատունակությունը պահպանելու համար «Վեկտոր պլյուս» ՍՊԸ և ՏԻՄ-երի միջև կնքված են համակարգի սպասարկման պայմանագրեր:

ՔԿԱԳ տարածքային բաժինների էլեկտրոնային կառավարման համակարգը ներդրված է ՀՀ բոլոր 54 ՔԿԱԳ տարածքային բաժիններում: Համակարգի միջոցով իրականացվում են ՔԿԱԳ տարածքային բաժիններում կատարվող գրեթե բոլոր գործառույթները: ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Քաղաքացիական կացության ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը հայաստանի հանրապետության աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 723 – Ն որոշմամբ ՔԿԱԳ տարածքային բաժինները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն են տրամադրում ՔԿԱ գրանցումների վերաբերյալ տեղեկություններ՝ համապատասխան ծրագ-

րային գործիքի (ՔԿԱԳ ՏԲ ԷԿՀ – հեղ.) կիրառմամբ (էլեկտրոնային եղանակով, առցանց): Այսպիսով, կարելի է փաստել, որ ՔԿԱԳ ՏԲ ԷԿՀ կիրառումը ևս դարձել է պարտադիր:

Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում 2008–2009թթ. ընթացքում ներդրվել է ՀՀ 225 համայնքներում: 2012թ. հունվարի 1-ի դրությամբ համակարգը ներդրված էր ընդամենը 256 համայնքներում (համայնքների մոտ 28%-ը), իսկ 2013 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ 490 համայնքներում (համայնքների մոտ 53%-ը): Համակարգի կիրառման արդյունավետությունը կախված է տարբեր գործոններից: Այն առավել արդյունավետ է գործում այն համայնքներում, որտեղ կան համապատասխան քանակությամբ համակարգիչներ, տեղային համակարգչային ցանց և ուսուցանված մասնագետներ: Քանի որ ՀԿՏՀ շահագործումը դեռևս պարտադիր բնույթ չի կրում, ապա համակարգի ներդրման և լիարժեք գործարկման հարցում մեծ է նաև համայնքի ղեկավարի սուբյեկտիվ մոտեցման գործոնի դերը: Այսպես՝ ըստ համացանցում իրականացրած հարցումների՝ մասնակիցների մոտ 25%-ը, որպես ՏԻՄ-երի կողմից ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմնական խոչընդոտ նշել են «Համայնքի ղեկավարի կողմից նորագույն տեխնոլոգիաներով աշխատելու ցանկության և պատրաստակամության բացակայությունը»⁶¹:

ՀԿՏՀ-ը բաղկացած է տարբեր ավտոմատացված բաղադրիչներից (ենթահամակարգերից) և Web էջերից: Համակարգի հիմքում ընկած է տեղեկատվության ստացման, մշակման, փոխանակման միասնականության և միասնական տեղեկատվական տարածության գաղափարը: ՀԿՏՀ բաղադրիչների միջոցով ՏԻՄ-երի աշխատակիցները կարող են համակարգչային եղանակով իրականացնել իրենց գործառնությունները, իրականացնել ներքին և արտաքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն և այլն: Համացանցի հասանելիության պարագայում ՀԿՏՀ կարող է ծառայել նաև որպես տվյալ համայնքի **պաշտոնական համացանցային կայքը** (օրինակ, www.aparan.am, www.vayk.am, www.goriscity.am, www.vedicity.am, www.sisian.am, www.eghegnadzor.am, www.dilijancity.am, www.abovyan-kotayk.am, www.kapan.am, www.parakar.am, www.hovtashat.am, www.lusarat.am), ինչի միջոցով այցելուները կարող են ստանալ ՏԻՄ-երի գործունեության և համայնքի վերաբերյալ տարբեր տեղեկություններ, առցանց ծառայություններ, ինչպես նաև հաղորդակցվել աշխատակազմերի հետ: Այդուհանդերձ, ստեղծված և ներդրված կառավարման տեղեկատվական համակարգերը դեռևս չեն բավարարում ՏԻՄ-երի, ինչպես նաև տեղեկատվական հասարակության հիմնական կարիքների ապահովմանը: Անհրաժեշտ է մշակել նոր տեղեկատվական համակարգեր կամ առկա համակարգերը զարգացնել, համալրել նոր բաղադրիչներով (ենթահամակարգերով): Անհրաժեշտ է նաև կատարելագործել առկա համակարգերը և բաղադրիչները՝ համապատասխանեցնելով ժամանակակից պահանջներին և տեխնոլոգիական զարգացումներին:

Ալեհայտ է, որ տեղեկատվայնացման ոլորտում լավագույն արդյունքների կարելի է հասնել տարբեր համակարգերի միջև տեղեկատվության առցանց փոխանակում իրականացնելու և միասնական տեղեկատվական համակարգեր կիրառելու միջոցով: Այսօր արդեն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրված որոշ համակարգերի միջև **առցանց եղանակով** իրականացվում է տվյալների փոխանակում՝

- քաղաքապետարաններում և գյուղապետարաններում տեղադրված ՀԿՏՀ և պետական կառավարման մարմիններում տեղադրված Mulberry համակարգերի միջև,
- ՔԿԱԳ տարածքային բաժիններում տեղադրված էլեկտրոնային կառավարման համակարգերի և ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովման նախարարության էլեկտրոնային կառավարման համակարգերի միջև:

Ոչ առցանց եղանակով տվյալների փոխանակում է իրականացվում՝

- ՀՀ Գանձապետական տվյալների կառավարման տեղեկատվական համակարգի և ՀԿՏՀ (համայնքների բյուջեների եկամուտների մասին տեղեկություններ) միջև,
- քաղաքապետարաններում և գյուղապետարաններում տեղադրված գույքային հարկերի հաշվառման ավտոմատացված համակարգերի և ՀԿՏՀ միջև (հարկերի ապառքների ցուցակները):

Այդուհանդերձ, տվյալների փոխանակման գործընթացը շատ դեպքերում համակարգված չէ, չկան տվյալների տրամադրման (փոխանակման) հաստատված կարգեր: Այդ իսկ պատճառով գործող համակարգերում, առանց երկրորդ կողմի (կողմերի) հետ համաձայնեցման, հաճախ կատարվում են այնպիսի փոփոխություններ, որոնց արդյունքում խաթարվում է տվյալների պատշաճ փոխանակումը:

Այս առումով բացառություն կարելի է համարել ՔԿԱԳ տարածքային բաժինների էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգերի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կա-

ռավարման տեղեկատվական համակարգերի միջև տվյալների առցանց փոխանակման գործընթացը, ինչն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգին համապատասխան⁶²:

5.9. Համայնքային պաշտոնական կայքերի սակավությունը և դրանց զարգացածության ցածր աստիճանը

ՏԻՄ–երը տիրապետում են հանրային հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ տեղեկությունների, ինչպես նաև իրենց լիազորությունների շրջանակներում քաղաքացիներին ծառայություններ են տրամադրում: Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները և համացանցի հնարավորությունները, ՏԻՄ–երը կարող են **պաշտոնական կայքերի միջոցով** հանրությանը լայնորեն իրազեկել իրենց գործունեության և արդյունքների մասին, տրամադրել առցանց ծառայություններ, ինչպես նաև քաղաքացիներին հնարավորություններ ընձեռել մասնակցելու համայնքի կառավարման և որոշումների ընդունման գործընթացին: Այցելելով այդ կայքեր՝ յուրաքանչյուր ոք պետք է հնարավորություն ունենա առավելագույնս տեղեկություններ ստանալու տվյալ համայնքի և ՏԻՄ–երի գործունեության մասին: Համայնքների կայքերը պետք է լինեն ոչ թե շքեղություն, այլ տեղեկատվության ապահովման, ծառայությունների տրամադրման, ինչպես նաև բնակչության հետ հաղորդակցվելու միջոց:

ՀՀ օրենսդրությունը չի պարտադրում ՏԻՄ–երին (բացառությամբ Երևանի) ունենալ և վարել պաշտոնական կայքեր: Սակայն որոշ ՏԻՄ–եր, սեփական նախաձեռնությամբ, ստեղծել են պաշտոնական կայքեր: Առայժմ⁶³ ՀՀ 915 համայնքներից միայն 60–ն ունեն պաշտոնական կայքեր և այդ թիվն աճելու միտում ունի: Այլ հարց է, թե որքանով են ստեղծված կայքերը բավարարում հասարակության տեղեկատվական պահանջները, թե արդյո՞ք այդ կայքեր այցելելով՝ յուրաքանչյուր քաղաքացի կարող է ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկությունը, և թե արդյո՞ք օրենքով նախատեսված ողջ տեղեկատվությունն է տեղադրվում պաշտոնական կայքերում:

Կայքերի մի մասը ստեղծված են տարբեր կազմակերպությունների և անհատների կողմից, իսկ մյուս մասը հիմնված է ՀԿՏ վրա: Փորձագիտական հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է գործող պաշտոնական կայքերի բովանդակության համապատասխանությունը ՏԻՄ–երի գործունեության մասին տեղեկությունների մատչելիությունը կարգավորող օրենսդրությանը, կայքերին ներկայացվող համընդհանուր տեխնիկական պահանջներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ տեղեկությունների ստացման ակնհայտ պահանջներին: Բացահայտվել են կայքերում առկա հիմնական բովանդակային և տեխնիկական խնդիրները: Եթե ՀԿՏ հիման վրա գործող կայքերն ունեն միևնույն կառուցվածքը և ապահովում են միատեսակ հնարավորություններ, ապա մյուս կայքերը շատ տարբեր են և, հիմնականում, կրում են ներկայացուցչական–տեղեկատվական բնույթ: Կան կայքեր, որոնք հիմնականում պարունակում են որոշ ստատիկ /չփոփոխվող/ տվյալներ տվյալ համայնքի վերաբերյալ:

Գոյություն ունեցող համայնքային պաշտոնական կայքերին բնորոշ հիմնական խնդիրներն են՝ առցանց ծառայությունների բացակայությունը /սակավությունը/, անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը, անհամապատասխանությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ՏԻՄ–քաղաքացի արդյունավետ փոխգործակցության և մասնակցային գործիքների բացակայությունը, տեխնոլոգիական անհամապատասխանությունը նոր սարքավորումներին (Smartphone, Planshet) և այլն:

5.10. Քաղաքացիների ՏՏ գիտելիքների, հմտությունների և տեղեկացվածության անբավարար մակարդակը

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածը սահմանում է, որ համայնքի բնակիչներն ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում: Տեղեկատվական տեխնոլոգիաներն, անշուշտ, ընդլայնում են համայնքի բնակիչների հնարավորությունները՝ ուղղակիորեն մասնակցելու տեղական ինքնակառավարմանը և վերահսկողություն իրականացնելու համայնքի ղեկավարի, ավագանու, աշխատակազմի գործունեության նկատմամբ:

Համայնքներում ներդրված տեղեկատվական համակարգերը, համայնքային պաշտոնական համացանցային կայքերը օրեցօր ընդլայնում են իրենց հնարավորությունները՝ ապահովելով քաղաքացիների տեղեկացվածությունը, էլեկտրոնային եղանակով ծառայությունների տրամադրումը և այլն: Սակայն համայնքներում դեռևս քաղաքացիների շատ փոքր զանգված է օգտվում ընձեռված հնարավորություններից: Դրա

հիմնական պատճառներն են՝


1. Համացանցի և տեխնիկական միջոցների հասանելիության պակասը, հատկապես հեռավոր և փոքր համայնքներում:
2. Համայնքների կյանքին մասնակցելու, ՏԻՄ-երի որոշումների վրա ազդելու գործիքների սակավությունը համացանցում:
3. Հանրային իրազեկման միջոցառումների բացակայությունը համայնքային կայքերից՝ տարբեր տեղեկատվական համակարգերից և առցանց ծառայություններից օգտվելու նպատակով:
4. Համացանցում հայալեզու բովանդակության տեղեկատվության, հատկապես համայնքային բնույթի, սակավությունը:
5. ՏԻՄ-երի կողմից տրամադրվող առցանց ծառայությունների սակավությունը և շատ կայքերում դրանց խսպառ բացակայությունը:
6. Համացանցում համայնքային տեղեկատվական միասնական դաշտի և տեխնոլոգիական լուծումների բացակայությունը:

Անդրադառնանք այդ խնդիրներին առավել հանգամանալից:

5.11. Համացանցի և տեխնիկական միջոցների հասանելիության պակաս

Համակարգիչների օգտագործումը և համացանցային կապի հասանելիությունը յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման ամենակարևոր խթաններից են և կարևորագույն նշանակություն ունեն տեղեկատվական հասարակության ձևավորման համար:

Այսպես, Հայաստանը բնակչության քանակի և համացանցի հասանելիության համամասնությամբ զբաղեցնում է առաջին հորիզոնականը ԱՊՀ-ում: Նման տվյալներ է հրապարակել «InternetWorldStats» միջազգային կազմակերպությունը⁶⁴: Հայաստանի 2,970,495 բնակչության մոտ 60.6%-ը, այն է՝ 1,800,000 մարդու համար 2012 թ-ի հունիսի 30-ի տվյալներով համացանցը հասանելի է⁶⁵: Ըստ վիճակագրության, Հայաստանում լայնաշերտ ինտերնետից օգտվողների թիվը 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ 385 հազար է (նկար 5):



Նկար 5. Լայնաշերտ համացանցից օգտվող բաժանորդների քանակը

Օգտագործվող համացանցի ընդհանուր ծավալը մոտ 23 գիգաբիթ է: Համեմատության համար՝ այդ ծավալը 2010 թվականին կազմում էր 10–11 գիգաբիթ, իսկ համացանցի օգտագործողների թիվը մոտավորապես ավելացել է 130–150 հազարով: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալներով, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում 2007–2011 թվականների ընթացքում իրականացվել է 289 մլրդ 4 մլն 159 հազար դրամի ներդրում⁶⁶: Անշուշտ, նախորդ տարիների համեմատությամբ, նկատելի են առաջխաղացման և զարգացման տեմպերը: Այդուհանդերձ, այս ցուցանիշները բավարար համարել չի կարելի: Արձանագրենք նաև, որ համացանցից օգտվողների մի սովորական զանգված օգտվում է միայն սոցիալական և ժամանցային կայքերից: Այսպես՝ օրինակ, «Ֆեյսբուք» սոցիալական կայքում գրանցված հայաստանցի օգտատերերի քանակը, 2012 թ. մարտի 31-ի տվյալներով կազմում էր 282,700 օգտագործող, իսկ 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 362,000⁶⁷:

Հայաստանում համակարգիչների գները համեմատաբար բարձր են, քանի որ ներկրվում են օդային ճանապարհով, իսկ օդային փոխադրումներն ավելի թանկ են, քան ծովայինը կամ ցամաքայինը (օդայինով յուրաքանչյուր կիլոգրամի համար գանձվում է մինչև 5 եվրո ճանապարհածախս): Բարձր գների պատճառ-

որ նաև այն է, որ հայաստանյան շուկան փոքր է, և ապրանք է ներկրվում փոքր ծավալներով՝ հաճախ ոչ մեծաճախ գներով⁶⁸:

Խնդրին լուծում տալու համար ՀՀ-ում վերջին ժամանակներս իրականացվել են որոշ ծրագրեր: Մասնավորապես, 2009թ. սեպտեմբերից իրականացվում է «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը, որի նպատակն է մեծացնել բնակչության կողմից համակարգիչների օգտագործման մակարդակը՝ առաջարկելով ժամանակակից և հուսալի համակարգիչներ: Ծրագրի շրջանակում ձևավորվել է վերականգնվող ֆոնդ, որը շրջանառու միջոցներ է հատկացնում ծրագրում ներգրավված բանկերին: Արդյունքում, բանկերը բնակչությանը տրամադրում են վարկեր՝ ՀՀ տարածքում գործող համակարգչային տեխնիկայի վաճառքի խանութներից համակարգիչներ (սեղանի, դյուրակիր, պլանշետային) ձեռքբերելու նպատակով⁶⁹:

5.12. Համայնքների կյանքին մասնակցելու, ՏԻՄ-երի որոշումների վրա ազդելու գործիքների սակավությունը համացանցում

Ժողովրդավարական պետության կարևորագույն հատկանիշը քաղաքացիների մասնակցությունն է պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը: Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը հնարավորություն է տալիս ստեղծել փոխվստահության մթնոլորտ ՏԻՄ-երի և քաղաքացիների միջև, կիսել որոշումների պատասխանատվությունը, ապահովել քաղաքացիների տեղեկացվածությունը և այլն: ՏԻՄ-երն իրենք պետք է նախաձեռնեն քաղաքացիների մասնակցությունը համայնքի կյանքում, հետաքրքրված լինեն «համայնքում սոցիալական գործընկերության» մեջ:

Մի կողմից՝ ՏԻՄ-երը պետք է ունենան բավարար ունակություններ և կարողություններ՝ ժամանակակից տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցներով ապահովելու կատարվող աշխատանքների արդյունավետությունը և տրամադրվող ծառայությունների բարձր որակը, ինչպես նաև համապատասխան գործիքներ և մեխանիզմներ՝ քաղաքացիներին տեղական ինքնակառավարման գործընթացին մասնակցելու հնարավորություն ընձեռելու համար, իսկ մյուս կողմից, քաղաքացիները պետք է ունենան համապատասխան հնարավորություններ և ունակություններ ժամանակակից էլեկտրոնային մեթոդներով համայնքի կառավարման գործընթացին մասնակցելու համար: Այս առումով, վերջին տարիների ընթացքում, զարգացած երկրներում լայն տարածություն է ստացել «Էլեկտրոնային մասնակցություն» (E-Participation⁷⁰) հասկացությունը՝ «ՏՀՏ օժանդակությամբ մասնակցություն կառավարության գործերին և կառավարման գործընթացներին»⁷¹: Հաշվի առնելով ՀՀ տեղական ինքնակառավարման առջև կանգնած մարտահրավերները, համակարգում ակնկալվող բարեփոխումները և զարգացումները, անհրաժեշտ է ներդաշնակորեն և համընթաց կերպով իրականացնել ոլորտի տեղեկատվայնացման և, հատկապես, «Էլեկտրոնային մասնակցության» ապահովման նպատակային գործողություններ: Տեղեկատվայնացումը լուրջ հիմքեր կստեղծի ամբողջ ոլորտի զարգացման, ապակենտրոնացման գործընթացների խթանման և ակտիվացման համար:

Արձանագրենք, սակայն, որ Հայաստանում վերը նշված գաղափարները դեռևս լիարժեք չեն ընկալվում և առկա են մի շարք խնդիրներ ու խոչընդոտներ: Մասնավորապես, 2013թ. հունիսի տվյալներով, ՀՀ 10 մարզերի **914** քաղաքապետարաններից և գյուղապետարաններից շուրջ 80-ը դեռևս ապահովված չեն համացանցային կապով: Պաշտոնական համացանցային կայք ունեն միայն **60**-ը կամ **6.5%**-ը: Կարևորվում է նաև համայնքային կայքերի բովանդակությունը: Արդյո՞ք դրանք քաղաքացիներին տալիս են հնարավորություն՝ մասնակցելու համայնքի կառավարմանը և ՏԻՄ-երի որոշումների կայացմանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 28 համայնքների համացանցային կայքերը (ոչ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով) չեն պարունակում առցանց եղանակով մասնակցային գործընթաց ապահովելու գործիքներ: Դրանք, որպես կանոն, զուտ տեղեկատվական և ներկայացուցչական բնույթ են կրում: Ինչ վերաբերում է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգին՝ իբրև համայնքի պաշտոնական կայք, ապա, թեև այն ունի մասնակցային որոշ գործիքներ (*քվեարկություններ, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումների վերաբերյալ կարծիք հայտնելու հնարավորություն, ֆորում, աշխատակիցներին էլեկտրոնային նամակ հղելու հնարավորություն և այլն*), սակայն դրանց շարունակական լրամշակման, զարգացման և օգտագործման համար ավելի դյուրին դարձնելու անհրաժեշտությունը ևս հրատապ խնդիր է:

Հայաստանում «Էլեկտրոնային մասնակցության» աստիճանը դեռևս շատ ցածր է: Դա բնորոշ է թե՛ պետական կառավարման մարմիններին և թե՛ ՏԻՄ-երին: ՄԱԿ-ի հանրային կառավարման ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի կատարվում է վերլուծություն, որի նպատակն է պարզել յուրաքանչյուր պետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացածության մակարդակը: Այսպես, օրինակ, Ը-

ստ 2010թ. կատարված վերլուծության արդյունքների, ՀՀ «E-Participation» («Էլեկտրոնային մասնակցության») ինդեքսը հավասար է 0.043 (139-րդ տեղը 193 երկրների շարքում: Համաշխարհային մակարդակով այդ ինդեքսի միջինը 0.205 է)⁷²: Այս ցուցանիշները վկայակոչում են այն մասին, որ ՀՀ-ում գրեթե բացակայում է «Էլեկտրոնային մասնակցությունը»: ՀՀ «Էլեկտրոնային կառավարման զարգացման ինդեքսը» (E-government development index) 2012թ. հետազոտությունների արդյունքում կազմել է 0.4997, ինչը Հայաստանին թույլ է տվել 190 պետությունների շարքում զբաղեցնել 94-րդ տեղը (*Վրաստանը՝ 72-րդ, Ադրբեջանը՝ 96-րդ, Ռուսաստանը՝ 27-րդ*)⁷³:

Տեղական ինքնակառավարման ոլորտում «Էլեկտրոնային մասնակցության» և «Էլեկտրոնային կառավարման» խնդիրը լուծելու համար արդեն իսկ կան որոշ դրական նախադրյալներ: *Լավ ներուժ ունի մոտ 500 համայնքներում ներդրված «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը», որը համացանցի հասանելիության պայմաններում կարող է ծառայել նաև որպես տվյալ համայնքի պաշտոնական կայքը*⁷⁴ և ապահովել բազմաթիվ հնարավորություններ՝ այցելուների և, հատկապես, տվյալ համայնքի քաղաքացիների համար: Դրա հետ մեկտեղ, վերջին շրջանում Հայաստանում համացանցի հասանելիության աստիճանի կարող է աճի և համակարգչային տեխնիկայի գների անկման պայմաններում, զգալիորեն աճել է նաև համացանցից օգտվող քաղաքացիների թիվը: Այսպիսով՝ լուրջ նախադրյալներ են ստեղծվել մոտ ապագայում ՏԻՄ-երում ակտիվորեն և համատարած կիրառելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները և ձևավորելու մասնակցության հնարավորությունների արդյունավետ միջավայր՝ խթանելով տեղական ժողովրդավարության կայացումն ու ամրապնդումը: Այս առումով խիստ կարևորվում է ՏԻՄ-երի գործունեության տեղակատվանցման և տեղեկատվական հասարակության զարգացման միասնական քաղաքականության և ռազմավարական մոտեցումների առկայության անհրաժեշտությունը:

Համացանցի միջոցով համայնքային կյանքին քաղաքացիների մասնակցության նոր հնարավորություններից են նաև սոցիալական ցանցերը: Եթե մի քանի տարի առաջ սոցիալական ցանցերը պարզապես ծանոթությունների, շփման և վիրտուալ աշխարհում «ապրելու» հնարավորություն էր, ապա այժմ սոցիալական ցանցերի դերը շատ ավելի մեծացել է, գործառույթները՝ վերափոխվել: Վերջերս CNN-ի կողմից կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ համացանցում առկա նորությունների և տեղեկությունների 43%-ը տարածվում են սոցիալական ցանցերի միջոցով՝ առաջին հերթին Facebook-ով, 30%-ը՝ Էլեկտրոնային փոստի, իսկ 15%-ը կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով⁷⁵:

Փաստորեն, այժմ Facebook-ը դարձել է խոսքի ազատության մի նոր հարթակ, վիրտուալ մի հրապարակ, որտեղ ցանկացած ոք ազատ է իր կարծիքն արտահայտելու մեջ: Այն ներկայումս ամենահզոր սոցիալական ցանցն է աշխարհում և կարող է լուրջ փոփոխություններ և տեղաշարժեր անել հասարակության մեջ: Այս հնարավորություններն, անշուշտ, կարող է և պետք է օգտագործվեն նաև ՀՀ ՏԻՄ-երի և քաղաքացիների փոխհարաբերություններում: Դեռևս շատ քիչ թվով ՀՀ ՏԻՄ-եր են Facebook-ում ստեղծել իրենց սեփական էջերը (Դիլիջան, Մեծամոր, Աշտարակ, Վեդի և այլն):

Համացանցի միջոցով համայնքային կյանքին մասնակցելու, ՏԻՄ-երի որոշումների վրա ազդելու նոր գործիք է «Կարգի Բերեք» www.kargibereq.am կայքը, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս գրանցել համայնքներում առկա խնդիրները (աղբահանություն, փողոցային լուսավորություն, բազմաբնակարան շենքերի տանիքներ, նկուղներ և այլն)՝ քարտեզի վրա նշելով վայրը և կցելով նկարը: Արձանագրված խնդիրներն անմիջապես, առցանց եղանակով առաքվում են համապատասխան քաղաքապետարան կամ գյուղապետարան և դառնում ՏԻՄ-երի քննարկման առարկա: ՏԻՄ-երի կողմից խնդիրների լուծման մասին տեղեկություններն անմիջապես արտացոլվում են www.kargibereq.am կայքում: Նորաստեղծ այս գործիքը քաղաքացիական նոր մշակույթ ներդնելու նպատակ է հետապնդում: Այն նպատակաուղղված է ակտիվ, նախաձեռնող և սրտացավ քաղաքացի դաստիարակելուն: Համայնքի բնակիչը պիտի գիտակցի իր պատասխանատվությունը շրջապատի, բակի, համայնքի և ի վերջո պետության համար: Սա նաև ՏԻՄ-երի և քաղաքացիների փոխգործակցության լավ հնարավորություն է: Արձանագրենք, սակայն, որ www.kargibereq.am կայքը առայժմ գործում է միայն Վեդի, Վայք և Սիսիան համայնքների համար: Այնինչ, այս մշակույթը լայն տարածման անհրաժեշտություն ունի: Նկատենք նաև, որ քաղաքացիները առանձնապես ակտիվ չեն www.kargibereq.am կայքի միջոցով համայնքային խնդիրների արձանագրման հարցում, ինչը վկայում է համայնքներում «մասնակցության» ավանդույթների և սովորույթների բացակայության, տեղեկատվական հասարակության բացակայության կամ թույլ զարգացածության մասին:

5.13. Հանրային իրազեկման միջոցառումների բացակայությունը համայնքային կայքերից՝ տարբեր տեղեկատվական համակարգերից օգտվելու նպատակով

Հաջորդ կարևոր խնդիրը հանրային իրազեկման միջոցառումների սակավությունը կամ բացակայությունն է համայնքային կայքերից՝ տարբեր տեղեկատվական համակարգերից օգտվելու նպատակով: Այս ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետությունը մեծապես կախված է հիմնական շահառուների՝ համայնքի բնակիչների, իրազեկվածության մակարդակից: Իրականացված ուսումնասիրություններն ու հարցումները ցույց են տվել, որ նույնիսկ այն համայնքներում, որոնք ունեն պաշտոնական համացանցային կայքեր, քաղաքացիներից քչերը գիտեն կայքի գոյության մասին կամ երբևէ օգտվել են կայքից: Քաղաքապետարանները/գյուղապետարանները սեփական նախաձեռնությամբ չեն իրականացնում միջոցառումներ, որոնք միտված են քաղաքացիներին իրազեկելուն, համապատասխան քարոզչական աշխատանքներ կատարելուն: Որպես կանոն, իրազեկման միանգամյա միջոցառումներ են իրականացվում հասարակական կազմակերպությունների կամ դոնորների կողմից՝ հիմնականում ծրագրի մեկնարկի կամ ծրագրի արդյունքների ամփոփման շնորհանդեսի ձևով, որին շատ քիչ թվով քաղաքացիներ են մասնակցում: Նկատենք նաև, որ համայնքները հանրային իրազեկման սահմանափակ հնարավորություններ ունեն՝ տեղեկատվական տախտակներ, տեղեկատվական թերթիկներ: Շատ քիչ համայնքներում կա տեղական հեռուստատեսություն կամ տեղական տպագիր մամուլ, որոնց միջոցով հնարավոր է արդյունավետ իրազեկում իրականացնել: Իսկ համապետական ՀԼՄ-ներով քարոզչության համար անհրաժեշտ են մեծ ֆինանսական միջոցներ:

5.14. Համացանցում հայալեզու բովանդակության տեղեկատվության, հատկապես համայնքային բնույթի, սակավությունը

Հայաստանում օգտագործված համացանցի տրաֆիկի շուրջ 70–80%–ը բաժին է ընկնում արտաքին հոսքերին: Սա բացատրվում է նրանով, որ հայկական կայքերի մեծ մասի հոսթինգները (կայքի բովանդակությունը պահպանող տիրույթը) գտնվում են այլ երկրներում, ինչպես նաև հայ օգտագործողները մեծամասամբ օգտվում են միջազգային կայքերից (Facebook, Odnoklassniki, Google, YouTube, Yahoo, Yandex և այլն)⁷⁶: Շատ ավելի վատթար է վիճակը տեղական ինքնակառավարման ոլորտին և համայնքներին վերաբերող բովանդակության մասով⁷⁷: Դա հետևանք է թե՛ համայնքային կայքերի սակավության և թե՛ տեղական ինքնակառավարման ոլորտում գործող կազմակերպությունների և մասնագետների կողմից համացանցում քիչ տեղեկատվության գետեղման: Ուսումնասիրելով տեղական ինքնակառավարման ոլորտում հայտնի հասարակական կազմակերպությունների պաշտոնական կայքերը (www.caa.am, www.avagani.am, www.cfoa.am, www.infosys.am)⁷⁸ կարելի է նկատել, որ դրանք դեռևս քիչ տեղեկություններ են պարունակում համայնքների և տեղական ինքնակառավարման համակարգի /ոլորտի/ վերաբերյալ: Որպես դրական քայլ այս ուղղությամբ կարելի է համարել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից LOGIN⁷⁹ ծրագրի գրադարանում տեղական ինքնակառավարման ոլորտին վերաբերող նյութերի տեղադրումը (2005–2010թթ. ընթացքում գրադարանում տեղադրվել են մոտ 1000 փաստաթղթեր)⁸⁰: Այդուհանդերձ, հայալեզու բովանդակության տեղեկատվության սակավությունը համացանցում դեռևս լուրջ խնդիր է Հայաստանում տեղեկատվական հասարակության զարգացման ճանապարհին:

5.15. ՏԻՄ-երի կողմից տրամադրվող առցանց ծառայությունների սակավությունը կամ բացակայությունը, կայքերի հարմարավետության և բովանդակության հետ կապված խնդիրներ

Համայնքներում ներդրված տեղեկատվական համակարգերից, համայնքների պաշտոնական համացանցային կայքերից օգտվող քաղաքացիների սակավության պատճառներից են նաև ՏԻՄ-երի կողմից տրամադրվող առցանց ծառայությունների սակավությունը կամ բացակայությունը, կայքերի հարմարավետության և բովանդակության հետ կապված խնդիրները: 2013թ. հունիս ամսվա տվյալներով ՀՀ 915 համայնքներից միայն 60–ն ունեն համացանցային կայքեր: Քաղաքացիներին առցանց եղանակով ծառայությունների մատուցման առումով կայքերի բովանդակության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ համայնքային կայքերը (որոնք հիմնված չեն ՀԿՏՀ վրա) ընդհանրապես չեն բովանդակում առցանց ծառայություններ: Ի տարբերություն այլ կայքերի, ՀԿՏՀ հիման վրա գործող կայքերն ունեն որոշ առցանց ծառայություններ տրամադրելու հնարավորություններ (օրինակ՝ «Ելունել գրության/նամակի ընթացքին», «Ելունել վարձակալական վճարներին», «Սրանալ վճարումների կատարման ժամանակացույց», «Ելունել տեղական հարկերի մասով առաջացած պարտքերին», «Հաշվել տեղական տուրքերը», «Ընթացակարգերի նկարագրություններ», «Գրանցվել ընդունելության համայնքի ղեկավարի մոլ», «Ձևաթղթերի շտեմարան»):

Նկատենք, սակայն, որ թեև համակարգն ունի վերը նշված գործառնական հնարավորությունները, սակայն ոչ բոլոր համայնքներն են օգտագործում այս գործիքները, լրացնում դրանք բովանդակությամբ կամ գրանցում ելակետային տվյալները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ համայնքային կայքերը ոչ միշտ են օպերատիվ թարմացվում և ոչ բոլոր հղումներն են աշխատում կամ լցված են բովանդակությամբ:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիները ՏԻՄ-երի կողմից մատուցվող գրեթե բոլոր ծառայությունները հնարավորություն ունեն ստանալու համայնքի պաշտոնական համացանցային կայքի միջոցով՝ առցանց եղանակով:

Հաջորդ խնդիրը կապված է համայնքային կայքերի հոսթինգը սեփական սերվերի վրա իրականացնելու հետ: Հաճախ որոշ ՏԻՄ-երի պաշտոնական կայքերը հասանելի չեն աշխատանքային ժամերից հետո կամ հանգստյան օրերին, ինչը պայմանավորված է տարբեր հանգամանքներով՝ էլեկտրաէներգիայի խնայողություն, անվտանգության նկատառումներ և այլն:

Մյուս խնդիրը օգտագործողի համար կայքի հարմարավետությունն է: Անհրաժեշտ տեղեկատվության որոնումը երկար ժամանակ է պահանջում, հաճախ հղումների տրամաբանական կապը բացակայում է: Օրինակ, ՀՀ Արարատի մարզի Տափերական գյուղական համայնքի www.taperakan.am կայքի «Կոնտակտներ» բաժնում տեղադրված է «Քվեարկություններ» հղումը, որն էլ չի աշխատում: Նման թերությունները և բացթողումները բազմաթիվ են գրեթե բոլոր համայնքների կայքերում:

5.16. Համացանցում համայնքային բնույթի տեղեկատվական միասնական դաշտի և տեխնոլոգիական լուծումների բացակայությունը

Հաջորդ կարևոր խնդիրը համացանցում տեղական ինքնակառավարման համակարգին վերաբերող տեղեկատվության և ՏԻՄ-երի կողմից ծառայությունների տրամադրման զարգացած և հարմարավետ պորտալի բացակայությունն է: Սովորաբար համացանցային պորտալները գործում են որպես տարբեր թեմատիկ, մասնագիտական ընդհանրություններ ունեցող ռեսուրսներ և ծառայություններ ամփոփող բազմաշերտ հանգույցներ, որոնց բովանդակությունը համապատասխանում է այցելուների ընդհանուր հետաքրքրություններին: Թերևս, այդ բացը լրացնելու փորձ է արվել «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ համացանցային կայքի՝ www.infosys.am, միջոցով, որտեղ ներկայացված են համայնքային կայքերի հղումներ, որոշ օգտակար նյութեր և այլ տեղեկատվություն ՏԻՄ-երի աշխատակիցների և քաղաքացիների համար: Այդուհանդերձ, ՀՀ քաղաքացիների համար այսօր համացանցում չկան ոլորտի տեղեկատվությունից և մատուցվող ծառայություններից օգտվելու հարմարավետ և զարգացած հնարավորություններ: Այնինչ, զարգացած երկրներում նմանատիպ խնդիրները լուծելու համար, պորտալներից բացի, սկսել են կիրառել այսպես կոչված «ամպային տեխնոլոգիաներ», որոնց օգնությամբ համացանցի միջոցով, պահանջի դեպքում, համակարգիչներին և այլ սարքերին (օրինակ՝ սմարթֆոններ) տրամադրվում են ընդհանուր ռեսուրսներ (Shared Resources), ծրագրային ապահովում և տեղեկատվություն⁸¹: «Ամպ» տերմինը բնորոշում է բարդ ենթակառուցվածքի կերպար, որը քողարկում է բոլոր տեխնիկական մանրամասնությունները: Ամպային տեխնոլոգիաների տեղեկատվությունը մշտապես պահպանվում է համաշխարհային ցանցի սերվերներում և ժամանակավորապես պահպանվում է հաճախորդի համակարգչում: Ամպային տեխնոլոգիաների կիրառական ծրագրի (Cloud App) դեպքում պարզապես բացում են դիտարկիչը (Browser) և օգտագործում են այն: Այլ կերպ ասած, ամպային տեխնոլոգիաները օգտագործողներից պահանջում են երկու բան՝ համացանցային կապ և համացանցային դիտարկիչ: Տեղական ինքնակառավարման ոլորտին և ՏԻՄ-երին վերաբերող ամպային տեխնոլոգիաների առկայությունը լուրջ առավելություններ կապահովի ՏԻՄ-երի աշխատակիցների և քաղաքացիների համար՝ նպաստելով համայնքներում տեղեկատվական հասարակության զարգացմանը: Սակայն ամպային տեխնոլոգիաների ստեղծումը կապահանջի զգալի միջոցների ներդրում և միասնական մոտեցում:

6. Առաջարկություններ

6.1. Օրենսդրություն

Հարգացնել տեղեկատվայնացման ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը, մշակել ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման խթանմանն ուղղված համապատասխան օրենքներ և այլ իրավական ակտեր:

Օրենսդրորեն սահմանել ՏԻՄ-երի կողմից տեղեկատվության հաշվառման, մշակման, թարմացման, կիրառման, տրամադրման, ինչպես նաև էլեկտրոնային փոխհարաբերությունների կանոնները և պաշտոնական համացանցային կայքերում տեղեկատվության հրապարակման կարգը (*էլեկտրոնային փաստաթղթի և տեղեկատվության իրավական կարգավիճակը չպետք է զիջի թղթայինին*):

Օրենսդրորեն ամրագրել պահանջը, որպեսզի ՏԻՄ-երի կողմից մատուցվող որոշ ծառայություններ իրականացվեն նաև համացանցի միջոցով (տեղեկանքների ստացում, տեղական հարկերի, տուրքերի և վճարների վճարում, հարկային հաշվետվությունների ընդունում, առցանց մրցույթների, աճուրդների կազմակերպում ու անցկացում և այլն):

Օրենսդրորեն սահմանել ՏԻՄ-երի կողմից համայնքային պաշտոնական համացանցային կայքերի պարտադիր վարման պահանջը և կայքերում պարտադիր հրապարակման ենթակա իրավական ակտերի ու տեղեկությունների ցանկը: Մշակել և օրենսդրորեն սահմանել համայնքային պաշտոնական համացանցային կայքի հասկացությունը, չափորոշիչները, բովանդակության, գործառնական հնարավորությունների և վարման կարգի վերաբերյալ պահանջները: (Առաջին փուլում այս պահանջները կարող են կիրառվել, օրինակ, բոլոր քաղաքային և 5 հազարից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքների նկատմամբ, հետագայում՝ նաև մյուսների նկատմամբ):

Հստակեցնել «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթները. «2. Սույն օրենքով նախատեսված իրավական պահպանության իրավունքը տարածվում է **միայն** գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի նկատմամբ, բացառությամբ բնական և հանքային ջրերի»⁸²:

Մշակել համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման օրինակելի կարգ և ՏԻՄ-երին առաջարկել, հիմք ընդունելով այն, իրենց իրավական ակտերով ընդունել համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման կարգը:

Համայնքային պաշտոնական համացանցային կայքերում տեղեկատվության տրամադրման և հասանելիության ապահովման նպատակով կազմավորել ՏԻ ոլորտում գործող ՀԿ-ների ներկայացուցիչներից բաղկացած և հասարակական հիմունքներով գործող խորհուրդ, որը մշտադիտարկումների միջոցով կվերահսկի կայքերի հասանելիությունն ու բովանդակության առկայությունը:

Մշակել, քննարկել և համապատասխան իրավական ակտով սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում գործող կառավարման տեղեկատվական համակարգերի միջև իրականացվող էլեկտրոնային տվյալների փոխանակման կարգը:

Պարբերաբար վերահսկել և մշտադիտարկել համայնքների պաշտոնական համացանցային կայքերում առկա տեղեկատվության համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ քաղաքացիների համար ապահովելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին (տեղեկատվություն տրամադրողներին) էլեկտրոնային եղանակով դիմելու հնարավորություն (կապված տեղեկությունների տրամադրման, համացանցային պաշտոնական կայքերի օգտագործման և այլ հարցերի հետ):

ՏԻՄ-երին առաջարկել համայնքների ավագանիների կանոնակարգերում և աշխատակազմերի կանոնադրություններում ներառել դրույթներ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ կապված համայնքային պաշտոնական համացանցային կայքերի շահագործման և սպասարկման հետ:

6.2. Հեռահաղորդակցության միջոցների հասանելիություն և մատչելիություն

Նպատակային միջոցառումների իրականացմամբ նպաստել համայնքների միջև առաջացած այս-

պես կոչված «թվային ճեղքվածք» նվազեցմանը: Այդ նպատակով հատկապես թույլ ֆինանսական կարողություններ ունեցող համայնքներում (փոքր ու միջին, սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային) ապահովել գործուն աջակցություն՝ համացանցի ենթակառուցվածքների ձևավորման, կիրառման և զարգացման գործում:

Նպատակային միջոցառումների շնորհիվ նպաստել համացանցի մատչելիության ապահովմանը հասարակության լայն շերտերի համար: Համացանցի հանրային հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով, բնակավայրերի հաճախ օգտագործվող տարացքներում ստեղծել (տեղադրել) համացանցի (Wi-Fi) հանրային մատչելիության կետեր (կենտրոններ), որտեղ բնակչությունն անվճար կարող է օգտվել համացանցից: Համայնքների բնակիչների համար կազմակերպել համացանցից օգտվելու անվճար դասընթացներ:

6.3. Դոմենային անուններ

Մշակել և օրենսդրորեն սահմանել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական համացանցային կայքերի դոմենային անունների ձևավորման և գրանցման կարգը: Սահմանել, որ համայնքների պաշտոնական համացանցային կայքերի անունները պետք է համահունչ լինեն համայնքների անուններին և գրանցվեն դոմենների միայն **.am** տիրույթում:

Կազմել և հաստատել համայնքային պաշտոնական համացանցային կայքերի դոմենային անունների ցանկը՝ ցուցաբերելով միասնական մոտեցում, առաջարկել ՏԻՄ-երին՝ գրանցելու այդ դոմենային անունները, ցուցաբերելով համապատասխան աջակցություն: Կարող են օգտագործվել երկրորդ մակարդակի դոմենային անուններ (օրինակ՝ **.com.am**, **.lgb.am**, **.mun.am** կամ **.shirak.am**, **.kotayk.am**, **.armavir.am**, **.ararat.am**, **.syunik.am**, **.vayotsdзор.am**, **.tavush.am**, **.gegharkunik.am**, **.aragatsotn.am**, **.lori.am**):

Նպաստել հայատառ դոմենային անվանումների համակարգի ներդրմանը և հայատառ դոմենային տիրույթի (օրինակ՝ **.hh** կամ **.hայ** կամ **.արմ**) գրանցմանը:

6.4. ՏԻՄ-երի մարդկային և մասնագիտական ներուժը

Հնարավորությունների առկայության դեպքում աջակցել համայնքային ծառայողների համար «սոցիալական փաթեթի» ներդրմանը:

Միջոցներ ձեռնարկել՝ նպաստելու տեղական ինքնակառավարման համակարգում ժամանակակից ՏՏ ոլորտի մասնագիտական բարձր ներուժ ունեցող անձանց ներգրավմանը:

Նպաստել համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների, ինչպես նաև ատեստավորումների օբյեկտիվության աստիճանի բարձրացմանը:

Միջոցներ ձեռնարկել՝ ձևավորելու և զարգացնելու քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց (*համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, խորհրդականների, ռեֆերենտների և օգնականների*) մասնագիտական կարողությունները ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բնագավառում:

Առաջարկել ՏԻՄ-երին համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում ամրագրել համայնքներում կիրառվող տեղեկատվական համակարգերին տիրապետելու պահանջներ:

Հստակեցնել համայնքային ծառայողների պաշտոնների օրինակելի անձնագրերում ամրագրված «*համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն*» պահանջը, դրա ստուգման և գնահատման կարգն ու չափանիշները:

Միջոցներ ձեռնարկել համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների հետևողական և շարունակական կատարելագործման համար: Այդ նպատակով արմատապես վերանայել համայնքային ծառայողների պարտադիր վերապատրաստման հետ կապված մոտեցումները, մասնավորապես՝

- Վերապատրաստման ծրագրերում զգալիորեն ավելացնել «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժնին հատկացված դասաժամերը:

- «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժնի թեմաներով վերապատրաստումը կազմակերպել փորձառու մասնագիտացված կազմակերպությունների միջոցով, համակարգչային տեխնիկայով հագեցած լսարաններում:
- Վերապատրաստման ծրագրերի տարբեր թեմաներում ներառել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բաղադրիչներ:
- Ժամանակակից տեղեկատվական համակարգերի կիրառմամբ իրականացնել վերապատրաստում անցած մասնագետների գիտելիքների և ունակությունների ստուգում և գնահատում:
- «Էլեկտրոնային ուսուցումը» և «Էլեկտրոնային վերապատրաստումը» հասանելի դարձնել համայնքային ծառայողների համար՝ համացանցում տեղադրելով ուսուցման նյութեր, ուսուցողական տեսահոլովակներ, առցանց եղանակով կրթվելու, վերապատրաստվելու և ստացած գիտելիքները ստուգելու համար նախատեսված համակարգեր:

Նպաստել համայնքային ծառայողների վերապատրաստման ժամանակակից ուսումնական կենտրոնների ստեղծմանը և ինստիտուցիոնալացմանը՝ հիմնվելով նաև առկա ուսումնական կենտրոնների կամ կազմակերպությունների վրա: Այդ կենտրոններին լիազորել նաև թափուր պաշտոնների համար հավակնող անձանց վերապատրաստման գործընթացը:

Նպաստել համայնքային մասնագետների համար ուսումնամեթոդական և ուսուցողական (այդ թվում էլեկտրոնային) նյութերի պարբերաբար մշակմանը և հրատարակմանը: Նյութերի էլեկտրոնային տարբերակները նաև տեղադրել համացանցում:

6.5. Համայնքների զարգացման ծրագրեր

Առաջարկել ՏԻՄ-երին համայնքների զարգացման քառամյա ծրագրերում ներառել ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվանացմանը և տեղեկատվական հասարակության ձևավորմանն ու զարգացմանն ուղղված հստակ և իրատեսական բաղադրիչներ:

Համայնքների համար մշակել ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվանացման և տեղական տեղեկատվական հասարակության ձևավորման օրինակելի ռազմավարական պլան:

6.6. Ֆինանսական միջոցներ

Առաջարկել ՏԻՄ-երին համայնքների բյուջեներից մշտական հիմունքներով, մասհանումներ կատարել տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, սպասարկման և զարգացման համար: *Այդ մասհանումները պետք է նպատակաուղղված լինեն մշտական և անսահմանափակ համացանցի օգտագործման, ներդրված տեղեկատվական համակարգերի սպասարկման, պաշտոնական կայքի դոմենային անվան պահպանման, կայքի հոսթինգի (եթե կայքը տեղադրված է այլ կազմակերպության սերվերում), տեխնիկական միջոցների ձեռքբերման, վերանորոգման և արդիականացման, ինչպես նաև մասնագետների վերապատրաստման համար ծախսերը կատարելուն:*

Առաջարկել ՏԻՄ-երին համայնքային բյուջեներում նախատեսել անհրաժեշտ միջոցներ՝ համայնքների քառամյա զարգացման ծրագրերում տեղ գտած ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվանացման և համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորման (զարգացման) ծրագրերի իրականացման համար:

Աջակցել ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվանացման ծրագրերին և նախագծերին: Նպաստել ներդրումների ներգրավման համակարգի զարգացմանը, տեղեկատվանացման նախագծերի մշակման և իրականացման շահագրգռման մեխանիզմների ստեղծմանը և կատարելագործմանը:

6.7. Տեխնիկական միջոցներ

Առաջարկել ՏԻՄ-երին քաղաքապետարանների և գյուղապետարանների վարչական շենքերում ստեղծել (արդիականացնել) տեղային համակարգչային ցանցեր: Պարբերաբար արդիականացնել համակարգչային տեխնիկական: Ղեկավար և մասնագիտական աշխատակազմի յուրաքանչյուր

անդամի համար ապահովել տեղային ցանցին միացված, համացանցին և համայնքային կառավարման տեղեկատվական համակարգին հասանելիություն ունեցող համակարգիչ, ինչպես նաև անհրաժեշտ այլ տեխնիկական միջոցներ:

Առաջարկել ՏԻՄ-երին համայնքի ավագանու սենյակում (եթե այդպիսին կա ՏԻՄ-երի վարչական շենքում) տեղադրել տեղային ցանցին միացված, համացանցին և համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերին հասանելիություն ունեցող համակարգիչ(ներ) և տեխնիկական այլ միջոցներ:

Առաջարկել ՏԻՄ-երին քաղաքապետարաններում և գյուղապետարաններում ներդրված տեղեկատվական համակարգերի և տվյալների հուսալիությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով, բացի հիմնական սերվերներից, կիրառել նաև պահեստային սերվերներ, և տվյալների պահպանման արտաքին կուտակիչներ (Data Storage):

Առաջարկել ՏԻՄ-երին քաղաքապետարաններում և գյուղապետարաններում օգտագործել բավարար հզորության և որակի միայն «առանձնացված» սերվեր համակարգիչներ (Server):

Հաղորդակցության որակյալ և մատչելի ենթակառուցվածքի առկայության պայմաններում նպաստել համայնքների համար «Տվյալների կենտրոնների» (Data Centers) ստեղծմանը:

6.8. Կառավարման տեղեկատվական համակարգեր

Ստեղծել և վարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում գործող կառավարման տեղեկատվական համակարգերի գրանցամատյան: Մշակել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում գործող տեղեկատվական համակարգերի միջև տվյալների փոխանակման ստանդարտներ և ընթացակարգեր: Տվյալների փոխանակումն իրականացնել հաստատված ընթացակարգերին համապատասխան:

Առաջարկել ՏԻՄ-երին մշակել ներդրված կառավարման տեղեկատվական համակարգերի միջոցով իրականացվող աշխատանքների (այդ թվում քաղաքացիներին և իրավաբանական անձանց տրամադրվող ծառայությունների) ընթացակարգերը և դրանք հաստատել ՏԻՄ-երի իրավական ակտերով:

Նպաստել ՏԻՄ-երի համար նոր տեղեկատվական համակարգերի մշակմանը, ինչպես նաև համայնքներում ներդրված կառավարման տեղեկատվական համակարգերի զարգացմանը (այդ թվում ՀԿՏՀ-ի)՝ համապատասխանեցնելով դրանք օրենսդրությանը, տեխնոլոգիական զարգացումներին, էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական հասարակության ժամանակակից պահանջներին:

Նպաստել ՀԿՏՀ-ի «խոշորացված համայնքների» համար տարբերակի մշակմանը (համայնքների խոշորավման գործընթացը սկսելու դեպքում):

6.9. Համայնքային պաշտոնական կայքեր

Օրենսդրությամբ սահմանել, որ յուրաքանչյուր ՏԻՄ (քաղաքապետարան, գյուղապետարան) կարող է ունենալ պաշտոնական միայն մեկ համացանցային կայք:

Ստեղծել և վարել համայնքային պաշտոնական կայքերի գրանցամատյան:

Սահմանել ՏԻՄ-երի համացանցային պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները (*տեղեկատվական և տեխնոլոգիական բաղկացուցիչների պահպանման և ապահովման պահանջները, տեխնիկական և կազմակերպչական բնույթի պահանջները, անվտանգության ապահովման պահանջները, տեխնոլոգիական համապատասխանությունը նոր սարքավորումներին (Smartphones, Tablets) և այլն*):

ՏԻՄ-երի պաշտոնական կայքերի նկատմամբ սահմանված պահանջներից ելնելով նպաստել ՏԻՄ-երի համացանցային պաշտոնական կայքերի մշակմանը և գործարկմանը:

Առաջարկել ՏԻՄ-երին իրենց իրավական ակտերով սահմանել ՏԻՄ-երի պաշտոնական կայքերում տեղեկատվության հասանելիության ապահովման, արդիականացման և տեղադրման գոր-

ծընթացի կազմակերպումը (կայքի վարումը): Սահմանել պաշտոնական կայքերի վարման համար պատասխանատու ստորաբաժանման (կամ պաշտոնատար անձի) իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

Մշակել և հաստատել համայնքների պաշտոնական կայքերի մշտադիտարկման և գնահատման միասնական կարգ և պարբերաբար իրականացնել համայնքների պաշտոնական կայքերի մշտադիտարկում:

Սահմանել համայնքների պաշտոնական կայքերի ամենամյա մրցանակաբաշխություն:

6.10. Քաղաքացիների ՏՏ գիտելիքները, հմտությունները և տեղեկացվածության մակարդակը

Համացանցի և տեխնիկական միջոցների հասանելիության ապահովում

Նպատակային միջոցառումների և ծրագրերի շնորհիվ բարձրացնել Հայաստանում (հատկապես հեռավոր մարզերում և համայնքներում) համակարգիչների և համացանցի օգտագործման մակարդակը: Առաջարկել ծրագրային փաթեթներով համալրված ժամանակակից համակարգիչներ և դրանք գնելու համար վարկավորման արդի լուծումներ:

Նպաստել հեռավոր համայնքներում համացանցի հանրային հասանելիության կենտրոնների ստեղծմանը:

Համայնքների կյանքին մասնակցելու, ՏԻՄ-երի որոշումների վրա ազդելու գործիքներ

Նպաստել համայնքային պաշտոնական կայքերի մշակմանը և գործարկմանը ՀՀ բոլոր համայնքների համար: Համայնքների պաշտոնական կայքերում ստեղծել և զարգացնել «Էլեկտրոնային մասնակցություն» ապահովող գործիքներ:

Միջոցներ ձեռնարկել՝ ընդլայնելու համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի տարածման աշխարհագրությունը:

Առաջարկել ՏԻՄ-երին սոցիալական ցանցերում ստեղծել համայնքների «պաշտոնական» էջեր և արդյունավետորեն օգտագործել այդ ցանցերի հնարավորությունները: Համայնքների պաշտոնական կայքերում ապահովել հղումներ՝ առկա տեղեկությունները սոցիալական ցանցերի միջոցով տարածելու և տարբեր քննարկումներ կազմակերպելու նպատակով:

Նպաստել քաղաքացիների մասնակցությունը ապահովող նոր ու արդյունավետ տեղեկատվական համակարգերի և կայքերի ստեղծմանը:

Քաղաքացիների շրջանում հանրային իրազեկման միջոցառումներ

Համայնքային պաշտոնական կայքերից արդյունավետ օգտվելու նպատակով քաղաքացիների շրջանում իրականացնել քարոզչություն (ՁԼՄ-ներով, պետական, տարածքային կառավարման մարմինների համացանցային կայքերի միջոցով, սոցիալական գովազդի, բուկլետների, տեղեկատվական թերթիկների տարածման և այլ եղանակներով):

Համացանցում հայալեզու բովանդակությամբ տեղեկատվական ռեսուրսներ

Առաջարկել տեղական ինքնակառավարման ոլորտում գործող հասարակական կազմակերպություններին կատարելագործել իրենց կայքերը և դրանցում տեղադրել ոլորտին վերաբերող հայալեզու փաստաթղթեր ու տեղեկատվություն:

Նպաստել տեղական ինքնակառավարման համակարգին վերաբերող միասնական էլեկտրոնային գրադարանի ստեղծմանը:

ՏԻՄ-երի կողմից տրամադրվող առցանց ծառայություններ: Կայքերի հարմարավետությունը և բովանդակությունը

Օրենսդրորեն ամրագրել պահանջը, որպեսզի ՏԻՄ-երի կողմից մատուցվող որոշ ծառայություններ իրականացվեն նաև համացանցի միջոցով (տեղեկանքների ստացում, տեղական հարկերի, տուրքերի և վճարների վճարում, հարկային հաշվետվությունների ընդունում, առցանց մրցույթների, աճուրդների կազմակերպում և անցկացում և այլն):

Համացանցում տեղական ինքնակառավարման ոլորտի տեղեկատվական միասնական դաշտի և տեխնոլոգիական լուծումների ապահովում

Նպաստել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացած և հարմարավետ պորտալի ստեղծմանը, ինչը հնարավորություն կտա մեկ միասնական համացանցային տարածքից ստանալ ոլորտին վերաբերող բոլոր տեղեկությունները, ՏԻՄ-երի կողմից տրամադրվող առցանց ծառայությունները և այլն:

Միջոցներ ձեռնարկել ընդլայնելու ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստի ծառայության հասցեների տիրույթը՝ դրանում ներառելով նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները:

Նպաստել տեղական ինքնակառավարման ոլորտին և ՏԻՄ-երին վերաբերող ամպային տեխնոլոգիաների կիրառմամբ համակարգերի ստեղծմանը և ներդրմանը:

7. Ծանոթագրություններ

- ¹ http://hy.wikipedia.org/wiki/Տեղեկատվական_հասարակություն
- ² Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր 2012 – 2017 թթ.
<http://www.gov.am/files/docs/970.pdf>
- ³ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքը: <http://www.armstat.am/file/doc/99466623.pdf>
- ⁴ 1996թ. Չարենցավանի քաղաքապետարանում «ԵՎՐԱՍԻԱ» հիմնադրամի օժանդակությամբ ստեղծվեց ՀՀ-ում առաջին համայնքային տեղեկատվական-վերլուծական կենտրոնը (ՏՎԿ), որից հետո տարբեր համայնքներում ևս ստեղծվեցին նմանատիպ կենտրոններ:
- ⁵ 2008–2009 թթ. ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում ՀՀ քաղաքապետարանների և գյուղապետարանների տեխնիկական հենքը համալրվել է 520 համակարգիչներով և բազմաթիվ հարակից սարքավորումներով:
- ⁶ Ստեղծվել է «ՏՀՀԿ» ՀԿ կողմից և կիրառվել է համայնքներում բնակչության և բնակարանային ֆոնդի հեշվառում իրականացնելու, ինչպես նաև ընտրողների ցուցակները վարելու նպատակով: Համայնքներում համակարգը շահագործվել է մինչև 2006–2007 թթ.:
- ⁷ Ստեղծվել է «ՏՀՀԿ» ՀԿ կողմից և կիրառվել է քաղաքապետարաններում ու գյուղապետարաններում գործավարության աշխատանքները ինքնաշխատ եղանակով իրականացնելու համար: Համայնքներում համակարգը շահագործվել է մինչև 2008 թ.:
- ⁸ Ստեղծվել է «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից և շահագործվել է համայնքներում մինչև 2005–2006 թթ.:
- ⁹ Ստեղծվել է «ՏՀՀԿ» ՀԿ կողմից և կիրառվել է համայնքներում համայնքային գույքը հաշվառելու և կառավարելու համար: Համայնքներում համակարգը շահագործվել է մինչև 2007–2008 թթ.:
- ¹⁰ Ստեղծվել է «Վեկտոր պլյուս» ՍՊԸ կողմից և ապահովում է ՀՀ բոլոր 915 համայնքների գույքային հարկերի հաշվառման և գանձման գործընթացը:
- ¹¹ Ստեղծվել է «ՏՀՀԿ» ՀԿ կողմից պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում (պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն):
- ¹² Ստեղծվել է «ՏՀՀԿ» ՀԿ կողմից պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում (պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն):
- ¹³ Մասնագետների ուսուցումը իրականացրել են «Վեկտոր պլյուս» ՍՊԸ՝ մոտ 2400 մարդ, և «ՏՀՀԿ» ՀԿ՝ մոտ 2300 մարդ: ՔՍԳ-ները ստեղծվել են ՀՀ կառավարության, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ), տեղական ինքնակառավարման մարմինների և «ՏՀՀԿ» ՀԿ համատեղ իրականացված միջոցառումների շնորհիվ:
- ¹⁴ Internet World Stats: <http://www.internetworkworldstats.com/asia.htm#am>: (Համաձայն ՀՀ վիճակագրության ազգային ծառայության պաշտոնական տվյալների, 2011թ. հունիսի 1-ի դրությամբ ՀՀ բնակչության ընդհանուր թիվը գերազանցում էր 3 մլն 250 հազ. մարդու):
- ¹⁵ <http://www.mtc.am/edfiles/files/THT/Havelvac20209.pdf>
- ¹⁶ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքը՝ <http://www.psrc.am/download.php?fid=18625>
- ¹⁷ <http://jnews.am/node/868>
- ¹⁸ <http://www.mtc.am/edfiles/files/THT/THT1.pdf>
- ¹⁹ <http://www.computerforall.am/>
- ²⁰ Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության
- ²¹ ՀՀ օրենքը հարկերի մասին: Հավելված 2:
- ²² ՀՀ օրենքը եկամտային հարկերի մասին: Հոդված 13:
- ²³ ՀՀ օրենքը ինտերնետով հրապարակային ծանուցման մասին: Հոդվածներ 2 և 4:
- ²⁴ ՀՀ օրենքը հարկերի մասին: Հավելված 2:
- ²⁵ ՀՀ օրենքը եկամտային հարկի մասին: Հոդված 13 (Գործում է սկսած 2013 թ. հունվարի 1-ից):
- ²⁶ Համաձայն ՀՀ կառավարության 2012 թ. փետրվարի 9-ի 115-Ն որոշման, էլեկտրոնային թվային ստորագրություն կարելի է ձեռք բերել 13000 դրամով /մինչ այդ՝ 15000 դրամ/, իսկ այն ընկերություններն ու անհատ ձեռնարկատերերը, որոնց ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը նախորդ հաշվետու տարվա արդյունքներով կազմում է 58.35 մլն դրամից ավելի և չի գերազանցում 100 մլն դրամը, կարող են էլ. ստորագրություն ձեռք բերել ընդամենը 3500 դրամով:
- ²⁷ ՀՀ օրենքը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին: Հոդված 8. Երևանի պաշտոնական համացանցային կայքը:
- ²⁸ ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին: Հոդված 9. Տեղական ինքնակառավարման սկզբունքները:
- ²⁹ ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին: Հոդված 12¹. Տեղեկացումը համայնքի ավագանու նիստերի մասին:
- ³⁰ ՀՀ օրենքը տեղեկատվության ազատության մասին: Հոդված 7. Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը:
- ³¹ Օրենքը ուժի մեջ է մտել 2010 թ. հունվարի 1-ից:
- ³² Միայն .AM տիրույթում 13.07.2012 թ. դրությամբ գրանցված էր **20081**, իսկ 16.09.2013 թ. դրությամբ՝ **21529** դոմենային անուն (<https://www.amnic.net/>)
- ³³ Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության

- ³⁵ ՏՀՏ արդյունավետ կիրառումը զարգացած երկրների պետական և մասնավոր հատվածների տարբեր կազմակերպությունների աշխատակիցների համար հեռահար եղանակով աշխատելու (Telework) լուրջ հնարավորություններ է ստեղծել – <http://www.bbc.co.uk/news/magazine-11879241>
- ³⁶ <http://netindex.com/value/allcountries/>
- ³⁷ Armenia Network Information Centre: <https://www.amnic.net/whois/>
- ³⁸ ՀՀ աշխարհական նշումների մասին օրենք: Հոդված 36. Դոմեն անվան հետ հասկացությունը:
- ³⁹ Armenia Network Information Centre: <https://www.amnic.net/register/?res=Y>
- ⁴⁰ <http://www.internet-law.ru/book/domain-names/index-2211.htm>
- ⁴¹ Օրինակ Սարալանջ անվանմամբ կան 4 գյուղական համայնքներ, Սառնաղբյուր, Զրառատ, Շենավան, Շահումյան՝ 3 և այլն: Կան Ագարակ, Արովյան, Մարտունի, Մեծամոր, Արմավիր և՛ քաղաքային, և՛ գյուղական համայնքներ:
- ⁴² <http://mir24.tv/news/hi-tech/6553178>
- ⁴³ <http://stat.nic.ru/>
- ⁴⁴ ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1923-Ն որոշում
- ⁴⁵ ՀՀ օրենքը համայնքային ծառայության մասին: Հոդված 2. Սույն օրենքի կարգավորման առարկան:
- ⁴⁶ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական համացանցային կայքը: <http://www.mta.gov.am/files/docs/500.xls>
- ⁴⁷ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական համացանցային կայքը: <http://www.mta.gov.am/hy/method-mater-clarifications/>
- ⁴⁸ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական համացանցային կայքը: <http://www.mta.gov.am/files/docs/264.zip>
- ⁴⁹ Տվյալները վերցված են համայնքների պաշտոնական կայքերից: Օրինակ՝ Սիսիանի համայնքի պաշտոնական կայքից՝ <http://sisian.am/CMIS/Pages/NewBudget/OutPlan/View.aspx?reclid=1115>
- ⁵⁰ Երևանի պաշտոնական կայքը: <http://www.yerevan.am/edfiles/files/avagani%2025.12%20artahert/h3.pdf>
- ⁵¹ «ՏՀԶՎԿ» ՀԿ պաշտոնական կայքը: Դասընթացների ծրագրեր – <http://infosys.am/Pages/DocFlow/Doc.aspx?nt=2&dt=TrainingPlan>
- ⁵² ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին: Հոդված 53. Համայնքի զարգացման ծրագիրը:
- ⁵³ Երևանի պաշտոնական կայքը: <http://www.yerevan.am/edfiles/files/avagani/2010-13.pdf>
- ⁵⁴ Վանաձորի պաշտոնական կայքը: <http://vanadzor.am/index.php>, https://docs.google.com/file/d/0BwAEj_YFCdmzUkNZFpkcllZRM/edit?usp=sharing&pli=1
- ⁵⁵ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքը: <http://mta.gov.am/hy/budgetary-incomes/>
- ⁵⁶ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքը: <http://www.mta.gov.am/files/docs/59.pdf>, ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքը: <http://www.minfin.am/up/pbkat/2010budgetreport111.pdf>
- ⁵⁷ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքը: <http://www.mta.gov.am/files/docs/500.xls> (6802 առկա պաշտոններից զբաղեցված են 6016-ը):
- ⁵⁸ Աղյուսակում բացակայում են Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների տվյալները
- ⁵⁹ Օրինակ Կոտայքի մարզի Բջնի գյուղի սերվեր (նույն ինքը սպասառոտ) համակարգչի ծրագրային ապահովումը 2010–2011թթ. ընթացքում 18 անգամ խափանվել է տարբեր պատճառներով: Սերվերը առանձնացնելուց հետո այլևս նման խնդիրներ չեն առաջանում:
- ⁶⁰ http://en.wikipedia.org/wiki/Data_center
- ⁶¹ «ՏՀԶՎԿ» ՀԿ պաշտոնական կայքը: <http://infosys.am/Pages/Home/votadmin.aspx>
- ⁶² ՀՀ կառավարության 26 մայիսի 2011 թ. N 723-Ն որոշում՝ «Քաղաքացիական կացության ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու կարգը հաստատելու մասին»
- ⁶³ 2012 թ. մայիսի 1-ի դրությամբ
- ⁶⁴ <http://www.internetworldstats.com/stats3.htm#asia>
- ⁶⁵ <http://panorama.am/am/interviews/2012/02/11/inet/>
- ⁶⁶ <http://www.panorama.am/am/IT/2012/02/14/inet-prices-arabaiyan/>
- ⁶⁷ <http://www.internetworldstats.com/stats3.htm#asia>
- ⁶⁸ <http://ankakh.com/2009/10/22178/>
- ⁶⁹ <http://www.computerforall.am/about/?lang=1>
- ⁷⁰ http://www2.unpan.org/egovkb/egovernment_overview/eparticipation.htm
- ⁷¹ <http://en.wikipedia.org/wiki/E-participation>
- ⁷² <http://www2.unpan.org/egovkb/profilecountry.aspx?ID=8>
- ⁷³ <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/un-dpadm/unpan048590.pdf>
- ⁷⁴ Տես օրինակ՝ www.vayk.am, www.agarak.am, www.aparan.am, www.sisian.am, www.artik.am, www.parakar.am, www.vedicity.am, www.dilijancity.am
- ⁷⁵ <http://www.guardian.co.uk/media/pda/2010/oct/07/cnn-recommendation-social-news>: Հարցմանը մասնակցել են համացանցի 2000 օգտագործողներ:
- ⁷⁶ <http://www.jnews.am/jff-content-project>
- ⁷⁷ Օրինակ, Google դոմինոյական համակարգում դոմեյն արդյունքում գտնվեցին մոտ 374.000 «Տեղական ինքնակառավարում», 2.320.000 «Местное самоуправление» և 189.000.000 «Local Self Government» պարունակող նյութեր:

⁷⁸ www.caa.am – «Հայաստանի համայնքների միություն» ՀԿ, www.avagani.am «Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ, www.cfoa.am – «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ, www.infosys.am – «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման» ՀԿ

⁷⁹ <http://www.logincee.org/library>

⁸⁰ <http://cfoa.am/HTML/Cragrer.htm>

⁸¹ ՏՏ գիտելիքի պորտալ: <http://www.itinfo.am/arm/cloud-computing/>

⁸² Ինչո՞ւ միայն «գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի նկատմամբ»: